

154

85  
NL-74

85

NL-27

1914

8 X 2003

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ. — ԹԻՒ 2  
Հրատարակութիւն Արամ Զարբի



8 Լ

№ 74

ՈՒԹԸ ՀԵՔԵԱԹՆԵՐ

4.8.

845

ՈԼ-27

ար

# ՈՒԹԸ ՀԷՔԵԱԹՆԵՐ

1. ՈՍԿԷ ՄԱԶԵՐՈՎ ՏԻՏԱՆԸ
2. ԿՕՇԿԱԿԱՐԸ ԵՒ ԹԶՈՒԿՆԵՐԸ
3. ԹՈԶՈՒՆԷ ՄԸ ԳՏՆԻԱԾ ՏՂԱՆ
4. ԵՐԱՆՏԱԳԷՏ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ
5. ՄԱՅՐ ՀՕՂԷՆ ԵՒ ՈՍԿԷ ԱՆԶՐԵԻԸ
6. ՈՍԿԷ ԹՈԶՈՒՆԸ
7. ԾՈՒՌ ԿԶԱԿ ԹԱԳԱՒՈՐԸ
8. ԿԱՐՕՆ ՈՒ ՄԱՐՕՆ



6180

6



### ՈՍԿԷ ՄԱՋԵՐՈՎ ՏԻՏԱՆԸ

Փամանակով չափազանց աղքատ ուր և կին մը կա-  
 յին։ Աստուք ունէին գաւակ մը, որուն համար կախարդ-  
 ները գուշակեր էին, թէ ան օր մը թագաւորին ազգիան  
 հետ պիտի ամուսնանայ։ Այնպէս պատահեցաւ, որ այս  
 գուշակութիւնը մինչև թագաւորին սկանչն հասաւ.  
 և երբ ան իմացաւ, թէ այդ տղուն ծնողքը աղքատ  
 էին, սաստիկ բարկացաւ և երգում ըրաւ որ, ինչ որ  
 ալ ըլլայ, իր ազգիկը այդ տղուն հետ պիտի չամուսնա-  
 ցնէ։ Այս մասին գիշեր գերեկ կերպիւր, շատ երկար  
 խորհեցաւ, և օրին մէկը ձի նստաւ ու տղան փնտուկու  
 ելաւ։ Երբ տղուն տունը գտաւ, հարցուց ծնողքին, թէ  
 արդեօք կը ծախսն իրենց տղան։ Ծնողքը այս տարօ-



3123

39

րինակ հարցումին վրայ զարմացած «ոչ» ըսին: Բայց  
թագաւորը շատ թախանձեց, և խոստացաւ մեծ դրամ  
վճարել: Եւ որովհետեւ թշուառ ծնողքը ուտելու չոր  
հաց անգամ չունէին, ասոր համար վերջ ի վերջ համա-  
ձայնեցան, իրենք իրենց ըսելով՝ — «Տղան բարի ծնունդ  
է, ճակտին վրայ նշան ունի, անոր գէշ բան մը չի պա-  
տահիր»:

Թագաւորը խոստացած դրամը վճարելով՝ տղան  
անտուկի մը մէջ դրաւ ու հեռացաւ: Բայց երբ խորունկ  
գետակի մը եզերքը հասաւ, անտուկը ջուրը նետեց ըսելով՝  
— «Ի՞նչն չես որ իմ աղջկանս հետ պիտի ամուսնա-  
նաս» —: Սակայն հակառակ թագաւորին սպասածին,  
անտուկը ոչ միայն չընկղմեցաւ, այլ կաթիլ մը ջուր իսկ  
նրա չը թափանցեց, և սկսաւ լողալ ջրին վրայ:  
Այսպէս անտուկը լողալով, լողալով ջրի հոսանքին հետ  
և վերջապէս ջրաղացի մը պատին դէմ առնելով, կե-  
ցաւ, ոչ շատ հեռու թագաւորին մայրաքաղաքէն: Ջրա-  
ղացպանը, որ այդ պահին կ'ուզէր ջուրը ներս կապել,  
նշմարեց անտուկը, և երկաթէ երկար կարթի մը օգնու-  
թեամբ զայն դէպի իրեն քաշեց: Ուրախ ուրախ անտու-  
կը ջրաղաց տարաւ, անոր ծանրութենէն գուշակելով.  
Թէ դրամով լեփ լեցուն անտուկ մըն էր գտածը: Բայց  
որքա՛ն մեծ եղաւ զարմանքը, երբ կափարիչը բանալով,  
անտուկին մէջ դրամի տեղ պտրտիկ սիրուն մանչուկ մը  
գտաւ: Ջրաղացպանը, որ անդաւակ էր, իսկոյն կինը  
կանչեց և ըրած անակնկալ գիւտը անոր հաղորդեց:  
Այր և կին չափէ դուրս երջանիկ զգացին ինքզինքնին,  
այդքան սիրունատես մանչուկ մը գտած ըլլալուն հա-  
մար: — «Աստուած դրկեց մեզի» — կը կրկնէին շարու-  
նակ: Իրենք շատ բարի մարդիկ ըլլալով, տղուն հետ  
ծնողքէ մը աւելի սիրով ու գգւանքով կը վարէին, և  
ամէն ինչամբ անպակաս կ'ընէին: Տղան այսպէս կամաց

կամաց մեծցաւ և անդաւակ ծնողքին թանկագին յոյն  
ու մխիթարութիւնը դարձաւ:

Տասնեւեօթը տարի յետոյ թագաւորը օր մը պա-  
տահարար ջրաղացի մօտովն անցաւ: Տաքէն շատ նեղ-  
ւած ըլլալով՝ ցանկացաւ սուերախիտ ծառերուն տակ  
քիչ մը հանգստանալ: Հոն կայտառ և գեղեցիկ երիտա-  
սարդ մը տեսնելով՝ հարցուց ջրաղացպանին, թէ ան  
իր զաւա՞րն էր: Միամիտ ջրաղացպանը՝ «Ոչ» պատաս-  
խանեց, և աւելցուց. — «Մնտուկի մը մէջէն գտայ, ջրա-  
ղացիս պատին տակ, երբ ան դեռ պտրտիկ մանկիկ մըն  
էր» —:

— «Բանի՞ տարի առաջ» — հարցուց թագաւորը  
կասկածամիտ:

— «Մօտաւորապէս տասնեւեօթը տարի առաջ» —  
պատասխանեց ջրաղացպանը:

— «Ծի՛շտ կ'ըսէք» — պողաց յանկարծ թագաւորը,  
և վայրկենապէս կատաղութիւնը ծածկելով՝ աւելցուց  
քաղցրութեամբ. — «Կրնա՞ք արդեօք թոյլ տալ, որ ես  
զինքը տեղ մը զրկեմ: Միտքս յանկարծ շատ կարեւոր  
բան մը ինկաւ և կ'ուզեմ զայն իսկոյն հաղորդել թա-  
գունուն, եթէ հաճիք, այդ բանը ինձի մեծ գոհունա-  
կութիւն պիտի պատճառէ: Եւ իբրեւ իր յօգնութեանը  
վարձք, երկու ոսկի պիտի տամ իրեն» —:

— «Ինչպէս որ Ձեր վեհափառութիւնը կը հրամա-  
նէ» — ըսաւ բարութեամբ միամիտ ջրաղացպանը:

Աւելորդ է ըսել, թէ թագաւորը կուսած էր, որ  
այդ գեղեցիկ երիտասարդը նոյն ինքն այն մանկիկն էր,  
գոր ինքը ջուրն էր նետած՝ խեղդելու դիտաւորութեամբ:  
Հիմա անոր թագունուն տանելու համար նամակ մը կուտար  
որուն մէջ կը գրէր՝ — «Այս նամակս ստանալուդ պէս,  
հրաման տուր նամակաբերը շղթայի զարնել, սպաննել ու  
թաղել: Այս բոլորը աւարտած պէտք ըլլայ, մինչեւ իմ  
ճամբորդութենէս տուն վերադառնալս» —:

Երիտասարդը նամակն առնելով, իսկոյն ճամբայ  
ինկաւ միամտօրէն: Սակայն այս կողմերը բնաւ չը-  
լալուն համար, իրիկուան դէմ հազիւ մեծ և անլոյս ան-  
տառ մը հասաւ: Հասկցաւ թէ ճամբան չփոթեր էր,  
բայց ուզէր չուզէր պիտի առաջ քալէր: Անտառին մէջ  
սոսկալի խաւար կը տիրէր: Այս խաւարին մէջէն քալե-  
լով՝ յանկարծ հեռուն լոյս մը նշմարեց, և խորհելով թէ  
հոն կեցող մը կայ, և թէ ան իրեն օգտակար կրնայ ըլ-  
լալ, ուստի քալիւրը արագութեամբ դէպի ճամբանոց  
լոյսն ուղղեց: Երբ հասաւ, տեսաւ որ պզտիկ խրճիթ  
մըն էր: Ներս մտնելով պառաւ կնոջմէ մը գատ հոն ուրիշ  
ոչ ոք չը նշմարեց: Պառաւը, երբ տեսաւ թէ անձանօթ  
մը ներս կը մտնէ, սաստիկ վախնալով հարցուց՝

— «Հոս ի՞նչ գործ ունիս, ո՞վ կը փնտռես» — :


— «Թագուհուն քով կ'երթամ որուն յանձնելիք  
նամակ մը ունիմ, բայց ճամբան մոլորելով հոս եկայ:  
Եւ որովհետեւ սաստիկ յոգնած եմ, շատ երախտապարտ  
պիտի մնամ ձեզի, եթէ թող տաք, որ այս գիշեր հոս  
հանգիստ ընեմ» — :

— «Անբաղդ ես» — ըսաւ պառաւը — «այս խրճի-  
թը աւազակներու կը պատկանի, երբ վերադարձան և  
քեզի հոս գտնեն, անպատճառ կ'սպաննեն» — :

— «Բայց ես այնքան յոգնած եմ, որ քայլ մը ան-  
գամ չեմ կրնար փոխել այլեւս» — ըսաւ երիտասարդը,  
և կնքւած նամակը սեղանին վրայ դնելով՝ նստարանի  
մը վրայ պառկեցաւ ու քնացաւ:

Քիչ վերջը, երբ աւազակները վերադարձան, տես-  
նելով մէկը պառկած, զարմացած հետաքրքրութեամբ  
հարցուցին պառաւին թէ — «Ո՞վ է այս երիտասարդը» — :

— «Նոզճահարելով վրան, ներս ընդունեցի» — պա-  
տասխանեց, և աւելցուց — «Թագուհուն նամակ մը կը  
տանի և ճամբան մոլորեւեր է» — : Աւազակապետը իսկոյն



Խրճիթին ներս պառաւէ մը գտն ուրիշ մարդ չը կար:

նամակը վերցուց, կնիքը վարպետութեամբ մը քակելով՝ կարդաց թագաւորին հրամանը նամակաբերը սպաննելու մասին: Վայրկեան մը մտածելէ վերջ, աւաղակապետը պատուեց նամակը, և չար թագաւորին գլխուն լաւ խաղ մը խաղալու նպատակով, ռերիչ մը գրեց: Այս գրածով թագուհիէն կը խնդրէր, որ աղջիկը ամուսնացնէ ա՛յն երիտասարդին հետ, որն որ այս հրամանագիրը իրեն ներկայացնէր:

Թողին, որ երիտասարդը մինչեւ լոյս հանգիստ քրնանայ: Առտուն, երբ արթնցաւ, նախաճաշ մը տալէ յետոյ քաղաքի ճամբան ցուցուցին:


Թագուհին նամակն առնելուն պէս, խփոյն հարսանեկան պատրաստութիւններ տեսնել տւաւ: Եւ որովհետեւ նամակաբեր երիտասարդը գեղեցիկ, կայտառ և սիրալիւր էր, իշխանուհին յօժարակամ ընդունեց ամուսնութիւնը, և երկուքը միասին սկսան շատ երջանիկ ապրիլ:

Ժամանակ մը վերջը թագաւորը վերադարձաւ, և երբ պատահածը տեսաւ՝ սարսափելի բարկացաւ, ու կանչելով թագուհին, հարցուց անոր թէ այս ի՞նչպէս է պատահեր, մի՞թէ այդ կը պահանջէր իր հրամանագիրը: Թագուհին սաստիկ նեղն ընկած՝ կը մրմնջէր.

— «Սիրեցեա՛լ ամուսինս, տհաւասիկ զրկած նամակդ, ինքնեղէ կարդացէք» —: Թագաւորը նամակն առնելով, տեսաւ որ անոր բովանդակութիւնը փոխւած էր, և երիտասարդը կանչելով հարցուց, թէ ի՞նչ ըրած էր այն նամակը, զոր ինքը վստահացեր էր անոր:

— «Ես բնաւ բան մը չեմ հասկնար» — պատասխանեց ան: — «Անտարակոյս փոխած պիտի ըլլան: Ձեր նամակը հոն, ուր բերած ատենս, գիշեր մը ստիպւած եղայ քնանալ» —:

Թագաւորը կատղեցաւ և գոռաց. — «Ո՛չ մէկ մարդ չի՛ կրնար իմ աղջիկս առնել, եթէ հրաշքներու սարե-



Միասին երջանիկ կ'ապրէին:

րուն վրայ թագաւորող Տիտանի գլխէն երեք մաղ չը բերէ. բե'ր սյդ մաղերը, և ա'ո աղջիկս» — :

— «Եթէ այդ է, բան մը չէ', շուտով կը բերեմ» — ըսաւ երիտասարդը, և նորահարսէն հրաժեշտ առնելով՝ ճամբայ ընկաւ : Ծառ երկար քալելէ յետոյ, վերջապէս հասաւ մեծ քաղաքի մը դուռներուն առջեւ : Հոն հսկող պահակը կեցուց զինքը, և հարցուց անոր, թէ ի՞նչ էր իր պաշտօնը և թէ ի՞նչ բան գիտէր :

— «Ամէն բան», պատասխանեց երիտասարդը :

— «Եթէ այդպէս է, շնորհ ըրէ և սորվեցուր մեզի, թէ ինչո՞ւ համար արդեօք, շուկայի հրապարակին վրայ գտնուող աղբիւրը, որ ժամանակով գինի կը հոսեցնէր, ցամքած է, և այլեւս ջուր անգամ չի տար : Ատոր պատճառը մեզի սորվեցո՞ւր, և մենք երկու իշարեռ ոսկի կուտանք քեզի, իբր վարձատրութիւն» — :

— «Ամենայն սիրով» — պատասխանեց երիտասարդը, «վերադարձիս կ'իմացնեմ՝ ձեզի պատճառը» — :

Ճամբան շարունակելով հասաւ ուրիշ քաղաքի մը պարիսպներուն առջեւ : Հոս ալ պահակը իրեն հարցուց, թէ ի՞նչ էր իր պաշտօնը, և թէ ի՞նչ գիտէր :

— «Ամէն բան» — պատասխանեց երիտասարդը :

— «Ուրեմն շնորհ ըրէ մեզի սորվեցնելու, թէ ինչո՞ւ համար ծառ մը, որ ատենով ոսկի խնձորներ կուտար, այժմ տերեւ անգամ չունի» — :

— «Ծառ աղէկ, վերադարձիս կ'ըսեմ» — պատասխանեց :

Այստեղէն ալ անցնելով՝ ճամբան շարունակեց և հասաւ լինի մը եզերքը, ուրկէ պիտի անցնէր : Մակոյկավարը իր կարգին հարցուց, թէ ի՞նչ էր իր պաշտօնը, և թէ ի՞նչ գիտէր :

— «Ամէն բան» — պատասխանեց :

— «Այդ պարագային՝ փոքրիկ ծառայութիւն մը ըրէ

ինծի սորվեցնելու, թէ ինչո՞ւ ևս դատապարտւած եմ անվերջ կերպով փոխադրողի պաշտօնին մէջ մնալու : Ըսէ ինծի ասոր գաղտնիքը, և գիտցած եղիւր, որ քեզի շատ լաւ պիտի վարձատրեմ» — :

— «Ատոր պատճառը քեզի կը յայտնեմ վերադարձիս» — պատասխանեց երիտասարդը, և փոխադրող մակոյկը նստեցաւ :

Երբ ջուրն անցաւ, ինքզինքը մեծ լեռան մը ստորոտը գտաւ, որ մթին ու խոփոտ կերպարանք մը ունէր : Հոս էր, որ ահարկու ապառաժի մը մէջ փորւած քարայրի մը խորը Տիտանը կ'ապրէր :

Երիտասարդը ճարպիկութեամբ ժայռերն ի վեր մագլցելով՝ հասաւ վերջապէս ահաւոր ապառաժին, և անդգուշութեամբ զարնւեցաւ քարայրի դրանը : Տիտանը ներսը չէր, սակայն անոր մեծ մայրը փարախին մէջն էր նստած :

— «Ի՞նչ կ'ուզես» — հարցուց պառաւը :

— «Երեք մաղ, Տիտանի գլխէն» — պատասխանեց անվախ երիտասարդը : — «Եթէ չստանամ, զիս պիտի մեռցնեն» — :

— «Ծառ կը ցաւիմ վրայդ, որովհետեւ, երբ Տիտանը վերադառնայ, անպատճառ քեզի կ'սպաննէ : Բայց և այնպէս պիտի ջանամ օգնել քեզի» — : Այս ըսելով, պատին մէջ ծակ մը ցոյց տուաւ՝ առաջարկելով հոն պահելուի, և պատերից հանդարտ մնալ, եթէ ազատւիլ կ'ուզէր :

— «Ծառ լաւ» — ըսաւ երիտասարդը. — «Բայց ես նոյնպէս կ'ուզեմ գիտնալ, թէ ինչո՞ւ համար աղբիւր մը, որ միշտ գինի է վազցուցեր, ցամքած է հիմա. ծառ մը՝ որ ոսկի խնձորներ է տուած շարունակ, այժմ տերեւ անգամ չունի. և յետոյ այսինչ մակոյկավարը ինչո՞ւ համար դատապարտւած է մնալ միշտ միևնոյն պաշտօնին մէջ, առանց փոխելու» — :



Ոսկէ մազերով Տիտանը :

— «Դուն ինծի երեք հարցում կ'ընես, որոնց պատասխանները շատ դժուար են» — ըսաւ պառաւը : Իսկ եթէ ծակին մէջ հանդարտ մնաս, պիտի լսես Տիտանէն հարցումներուդ ճիշտ պատասխանները, երբ ես երեք մազերը գլխէն փրցնեմ» — :

Գիշերը հասնելուն պէս Տիտանը եկաւ. և երբ ներս մտաւ, սկսաւ քիթը վեր քաշելով շունչ առնել և աղաղակել — «Աս ի՞նչ հոտ կայ, անտարակոյս օտարական մը կայ իմ քարայրիս մէջ» — : Ու սկսաւ քարայրի ամէն կողմերը տակն ու վրայ ընել, բայց ի զուր : Պառաւը դիտմամբ անոր հետ կուրի բռնելի ուզելով՝ բարձր ձայնով պոռաց վրան՝

— «Ի՞նչ տակն ու վրայ կ'ընես ամեն բան, նոր եմ հոգեքր և կարգի դրեք» — : Տիտանը ձայն չը հանեց և տեղը նստելով՝ սկսաւ ընթրել : Ընթրիքէն յետոյ, գըլուխը պառաւին ծունկերուն վրայ դնելով, իսկոյն քընացաւ, որովհետեւ սաստիկ յոգնած էր :

Երբ խոկալ սկսաւ, պառաւը մազ մը բռնեց և քաշելով փրցուց :

— «Ա՛յ, պառաւ, աղաղակեց Տիտանը քնած տեղէն վեր ցատկելով. — «Ի՞նչ կ'ընես» — :

— «Բան չկայ, իմացայ թէ չուկայի վրայ գտնուող աղբիւրը, որ ժամանակին գլինի կը հոսեցնէ եղեր, ցամքած է հիմայ, արդեօք ասոր պատճառն ի՞նչ է» — :

— «Է՛հ», ըսաւ Տիտանը, — «Ատիկա բան մը չէ. քարի մը տակ դօղօջ մը կայ, որ երբ սպաննուի աղբիւրը առաջուան պէս դարձեալ պիտի շարունակէ գլինի հոսեցնել» — :

Այս ըսելով՝ նորէն քնացաւ, և ա՛յնքան ուժեղ սկսեց խոկալ, որ ժայռերը կը դողային ձայնէն : Պառաւը մազ մըն ալ փրցուց :

— «Մազերս ինչո՞ւ կը քաշես» — աղաղակեց կատրած :

— «Մի՛ բարկանար» — ըսաւ մեղմութեամբ պառաւր, «քեզի հարցում մըն ալ ունիմ ընելիք» — :

— «Ի՞նչ է» — :

— «Մեծ թագաւորութեան մը մէջ ծառ մը կայ, որ ոսկի խնձորներ կուտայ եղեր, և հիմա տերև անգամ չունի, ի՞նչ է ասոր պատճառը» — :


— «Ատոր պատճառը, ըսաւ Տիտանը, — «Մառի արմատին քով մուկ մը կայ, որ կրծելով կ'ուտէ շարունակ, պէտք է զայն սպաննել, և ծառը առաջևան պէս դարձեալ ոսկի խնձորներ պիտի տայ, Բայց, եթէ զայն չսպաննեն ալ, շուտով կը սատկի: Եւ հիմա, այլեւս բաւական է, ձգէ որ հանդարտ քնանամ, եթէ անգամ մըն ալ զիս արթնցնես, հաւատա՛ որ ապտակ մը կ'ուտես» — :

Տիտանը վերստին քնացաւ: Եւ երբ պառաւր լսեց որ կը խռկայ, երրորդ մազը փրցուց: Տիտանը տեղէն ցատկեց կատաղի զազանի մը պէս, և ով գիտէ թէ ինչե՛ր պիտի ընէր, եթէ պառաւր անուշ խօսքերով իսկոյն ղինքը հանդարտեցուցած չըլլար, և չըսէր աղաչանքով .

— «Վերջին հարցում մըն ալ, և այլևս քեզի անհանգիստ չեմ ըներ: Լճին վրայ փոխադրող մը կայ, որ դատապարտւած է այդ պաշտօնը կատարելու անվերջանալի կերպով, անկէ ազատուիլ չի կրնար, ի՞նչ է ասոր զազանիքը» — :

— «Ապուշ մըն է» — ըսաւ Տիտանը, — «եթէ թիւրը յանձնէ առաջին անցորդին, որ կուգայ լճին միւս եզերքը փոխադրուելու, ինքը այդ պաշտօնէն կ'ազատուի, և անցորդն իր տեղը կ'անցնի: Դե՛հ, հիմա ձգէ քնանամ» — :

Երբ լուսը բացեցաւ, Տիտանը ելաւ գնաց: Պառաւր ծակին քովն երթալով՝ երիտասարդը դուրս կանչեց, տաւ անոր երեք ոսկէ մազերը և հարցուց՝, թէ լսե՛ր



Յամբած աղբիւր:

էր իր հարցումներու պատասխանները Տիտանէն, և մա-  
նաւանդ թէ միտքը լաւ պոննէր էր զանոնք: Երբ երի-  
տասարդը դրական պատասխան տուաւ, պառաւը զայն  
ճամբու դրաւ:

Երիտասարդը խորին շնորհակալութիւն յայտնելով  
բարերար պառաւին, ուրախ սրտով հեռացաւ մթին քա-  
րայրէն ու սարսափելի սարէն, և գրեթէ թռչելով հա-  
սաւ լճին եզերքը: Փոխադրողը երիտասարդի վերա-  
դառնալը նշմարելուն պէս, աճապարանքով մօտն եկաւ,  
և խոստացած պատասխանը պահանջեց:

— «Առաջ փոխադրէ զիս, յետոյ կը պատասխա-  
նեմ» — ըսաւ երիտասարդը:

Երբ մակոյկը լճին միւս եզերքը հասաւ, երիտա-  
սարդը ցամաք ելնելով՝ ըսաւ մակոյկավարին.

— «Երբ անցորդ մը գայ փոխադրելու, թիբը  
տուր անոր ձեռքը, այդպէսով դուն կ'ազատուիս պաշ-  
տօնէդ և անցորդը տեղդ կ'անցնի» —:

Փոխադրողը շնորհակալ ըլլալով, երիտասարդին մեծ  
և սքանչելի մարգարիտ մը ընծայեց, որ ինքնիրմէն լոյս  
կուտար:

Յետոյ եկաւ այն քաղաքը, ուր անտերեւ ծառն էր:  
Այսպէս ըսաւ պահակին՝

— «Սպաննեցէք մուկը, որ ծառին արմատները կը  
կրծէ, և ծառը դարձեալ ոսկի խնձորները պիտի տայ» —:

Քաղաքացիք երկու էչ տւին, երկուքն ալ ոսկիով  
բեռցւած: Երիտասարդը ճամբան շարունակելով՝ հա-  
սաւ վերջապէս ցամաքած աղբիւրին քաղաքը: Պահակը  
պահանջեց պատասխանել և պատճառն ըսել: Երիտա-  
սարդը ասոր ալ սորվեցուց դօդօշն սպաննել՝ աղբիւրէն  
հին ատենուան պէս դարձեալ գինի ստանալու համար:

Ասոնք ալ երիտասարդին երկու իշաբեռ ոսկի տւին,  
չափազանց շնորհակալ ըլլալով:



Նեկու աղբիկները բաւուսին մէջ

Այսպէս բաւական երկար առնն բացակայ ըլլալէ յետոյ, վերջապէս դղեակ հասաւ, ուր իր նորահարսը սրտատրոփ և տխրութեամբ վերադարձին կ'սպասէր անհամբեր: Որքան մեծ եղաւ իր զարմանքն ու ուրախութիւնը, երբ բեռցւած էջերով, ամուսնի վերադառնալը տեսաւ: Մանաւանդ որքան անպատմելի եղաւ երջանկութիւնը, երբ անոր յաջողութիւնները լսեց:

Երիտասարդը դղեակ մտնելուն պէս, երեք ոսկէ մագերը թագաւորին տւաւ, որ իր խոստումին համաձայն, այս անգամ այլեւս ստիպւած էր զայն որպէս իր փեսան ճանչնալու: Թագաւորը, տեսնելով չորս էջերը ոսկիով բեռցւած, աղաղակեց սաստիկ ուրախութիւնով լցւած՝ — «Սիրելի զաւակս, այսքան ոսկի դուն ո՞րտեղէն գտար» —:

— «Լճի միւս եզերքէն» — պատասխանեց երիտասարդը — «ուր անկասկած դեռ չատ կայ» —:


— «Խնդրե՛մ, ըսէ՛» — աւելցուց թագաւորը — «արդեօք ես այլ ինձ համար կրնամ բերել» —:

— «Ի՛նչքան որ ցանկանաք» — ըսաւ երիտասարդը, — «Երբ լծին եզերքը հասնիք, հոն փոխադրող մը պիտի տեսնէք, ըսէք անոր, ձեզի միւս եզերքը փոխադրէ, և դուք երկար չը տեւած պիտի հասնիք այն քաղաքը, ուրկէ ես այս ոսկիները կը բերեմ» —:

Եւ դեռ նոր փեսան իր խօսքերը չաւարտած, ազահ թագաւորը ձին հեծած դէպի լիճը արշաւեց: Եզերքն համնելով, վար իջաւ ձիէն և փոխադրողին նշան ըրաւ, զինքը միւս եզերքն անցնելու: Թագաւորը երբ մակոյկն իջաւ, փոխադրողը թիերը անոր ձեռքը տալով, ինքը ցամաք ցատկեց, և արքային նօսրը նստելով՝ թողեց փախաւ: Թագաւորը ապշած մնաց մակոյկին մէջ, զամառի պէս, և այլևս վարեանէն զատապարտե-

313  
399






Մի Կալ ի Խաբեռ ոսկի սիւն:

ցաւ յաւիտեան լինի վրայ մնալու, որպէս արժանի պատիւ իր ըրած չարութեան:

—«Արդեօք մինչև այսօր ալ հո՞ն է» — պիտի հարցնէք:

—«Անտարակոյս. ըսէք խնդրեմ, ո՞ր յիմարը թիւրը անոր ձեռքէն պիտի առնէ» —:

Գալով նոր փեսային, ան եղաւ թագաւորը: Եւ առանց վայրկեան մը կորսնցնելու զօրք զրկեց և իր հարազատ հայրն ու մայրը, ինչպէս նաև ջրադացպանն ու կինը իր քովը կանչեց: Ասոնց համար սուսանձին առանձին մարմարէ պալատներ յինչ տալով՝ մէջը բնակեցուց: Բոլորն ալ մինչև խորին ծերութիւն երջանիկ ու անվիշտ ապրեցան:



## ԿՕՇԿԱԿԱՐԸ ԵՒ ԹԶՈՒԿՆԵՐԸ

Աստնօք կօշկակար մը կար, որ թէեւ բարի ու աշխատասէր էր, սակայն անբաղդ ըլլալով, աղքատացեր էր մինչեւ ան աստիճան, որ այլեւս ոչինչ չունէր կտոր մը կաշիէն զատ, այս աշխարհիս վրայ: Այդ կաշիի կըտորն ալ հողիւ հաղ կը բաւէր զոյգ մը կօշիկի: Իրիկուն մը ձեռքն առաւ կաշին, և զգուշութեամբ չափեց ձեւեց ու կտրեց, անկէ զոյգ մը կօշիկ հանելով: Այս ընելէ յետոյ, հանդարտ խղճով գնաց տուն պառկեցաւ, միտքը դնելով յաջորդ առտուն կանուխանց ելլել աշխատիլ:

Յաջորդ առտուն, իր սովորական աղօթքն ընելէ յետոյ, գնաց աշխատելու: Բայց որքան մեծ եղաւ հիացումն ու զարմանքը, երբ կրպակի դուռը բանալով, կօշիկները արդէն կարւած գտաւ սեղանին վրայ: Քանի կը նայէր կօշիկներուն, այնքան ալ զարմանքը կ'աւելնար, և քիչ կը մնար, որ խելքը գլխէն թռցնէր: Կօշիկները անքան նուրբ, անքան ձեւաւոր կարւած էին, որ եթէ ինքը հարիւր տարի աշխատէր, չպիտի կրնար այնպէս կարել: Դժուար թէ հողագնդի վրայ վարպետ մը գտնուէր, որ իր ամենէն խնամքով կարածը, ասոնց կիտուն հաւասարուէր: Կօշկակարի խոր զարմանքը դեռ չէր անցեր, երբ յանկարծ կրպակի դուռը բացուեցաւ և յաճախորդ մը ներս մտաւ: Այս կօշիկները ասոր ալ հիացումն ու զարմանքը չարժեցին, և ան անքան հաւանեցաւ, որ սովորական գնին քառապատիկը վճարելով գնաց կօշիկները և ուրախ ուրախ հեռացաւ: Ապա շահար կօշկակարը մէջը մնաց: Քանի մը վայրկեան արձանի պէս կրպակին մէջտեղը կ'ընդունէ յետոյ, յանկարծ

չտապով դուռս ելաւ, գոցեց կրպակին դուռը, և չունչը շիտակ կաշիի վաճառականին քովն առաւ: Օրական ապրուստին համար քիչ մը դրամ մէկ կողմ դնելով, մնացածովը երկու գոյգի կաշի առաւ և կրպակ բերաւ: Իրիկուն դէմ երկու գոյգ կօշիկ ձեւեց, դրաւ սեղանին վրայ, և կրպակը լաւ մը գոցելով՝ տուն գնաց, միտքը դնելով յաջորդ առտուն կանուխանց ելնել և գործի սկսիլ: Յաջորդ առտուն սակայն, հողիւ թէ կրպակին դուռը բացած էր, որ արդէն նշմարեց սեղանին վրայ կարւած երկու գոյգ կօշիկները: Հիացումն ու զարմանքը ալ չափ չ'ունէին: Աստնօք ալ ուզած գնովը ծախեց: Ձեռքն անցած դրամովը չորս գոյգի կաշի կրնար գնել, և աւելորդ է ըսել, թէ իրիկունը ձեւեց և առտուն կանուխ չորան ալ կարւած գտաւ, այն ալ ինչ կար: Չ'երկարցնենք, մեր անբաղդ կօշկակարը բաղդաւորուեր էր: Ծայր աստիճան աղքատութեան հասնելէ վերջը, յանկարծ ոսկու հանք գտածի պէս հարստանալ սկսաւ, և դեռ անմրցելի վարպետի սնունն ալ վրան: Ծնունդի մօտերը իրիկուն մը, կօշկակարը կնոջն ըսաւ.

—«Եկու՛ր այս գիշեր կրպակիս մէջ ծածուկ անդ մը պահւելոսինք, և տեսնենք, թէ ո՞վ է, որ մեզի կ'օգնէ»—:

Այս առաջարկը սիրով ընդունեց կինը, և ամուսնուն հետ կրպակ գնաց:


Կօշկակարը այս անդամ քսան գոյգ կօշիկ էր ձեւեր և սեղանին վրայ դրեր: Կրպակին ներսի կողմը վարագոյր մը կախեցին և անոր ետին պահ մտան:

Կէս գիշեր ըլլալուն պէս, յանկարծ երկու թզուկ մարդիկ յայտնուեցան: Աստնօք անքան պզտիկ էին, այնքան պզտիկ, որ կարծես նորածին մանկիկներ ըլլային: Թճուկները լոյսը վառելով տեղաւորեցան սեղանին

առջև և իսկոյն գործի սկսան: Կօչկակարն ու իր կինը վարագոյրի ետին շունչերը բռնած, ուշի ուշով կր հետեւէին այս տարօրինակ վարպետներու կարին: Ասոնց մանրիկ ձեռքերը իրենց ճարպիկ մատերով ա՛յնքան արագ կը ծակէին, կը կարէին ու կը գամէին, որ կօչկակարր սքանչացած՝ չէր կրնար իր նայւածքը անոնցմէ հեռացնել: Գաճաճները առանց հանգիստ առնելու կ'աշխատէին զարմանալի արագութեամբ ու կանոնաւորութեամբ, և դադրեցան միայն այն վայրկեանին, երբ բոլոր ձեււած կօչիկները կարւած լինցած էին: Դեռ լուսարացին բաւական կար: Թղուկները անգամ մըն ալ չորս կողմը նայեցան, և երբ համոզւեցան թէ, այլեւս բան մը չը կար կարելու, երազի նման, ակնխարթի մը մէջ անշայտ եղան: Երբ լուսը բացուաւ, կինը տուն վերադարձաւ: Յաճախորդները կանուխանց կրօյակ դալով մեծ գոմարներ տալով, մէկը միւսի ձեռքէ խլելով, ժամւան մը մէջ բոլոր կօչիկները գնեցին տարին: Իրիկունը, երբ կօչկակարը հարիւր դոյզ կօչիկ ձեւած տուն վերադարձաւ, կինը, որ գլխաւորաւ մէկն էր, ամուսնուն ըսաւ.

— «Այս պտըտիկ մարդիկը մեզի թշւառութեան ծոցէն հանելով, քաղաքի ամենահարուստը դարձուցին, պէտք է որ մենք ալ մեր կողմէն նրախտագէտ ըլլանք: Երէկ գիշեր ես նկատեցի, որ խեղճերը վրանին սաք հագուստ չունին, և այդ բանը սիրտս կտոր կտոր ըրաւ: Ուստի ամենաթանկագին կտոր մը գնէ, և տուն ըրի, որ ես իմ ձեռքովս անոնց մէկ մէկ ձեռք գեղեցիկ զգեստ կարեմ» —,

Կօչկակարի սրտին ուղածն ըլլալով, երկու անգամ ըսել չուաւ: Իսկոյն շուկայ իջաւ և ամենաթանկագին աւելին զատելով՝ տուն վերադարձաւ: Շաբաթ մը վերջը արդէն զգեստները պատրաստ էին: Եւ իրիկուն մը



Ցասկելով ու պարելով աներեսոյք եղան:

փոխանակ ձեւած կօչիկներու, սեղանին վրայ դրին զգետները, ու իրենք դարձեալ վարագոյրին ետին պահ մտան, դիտելու համար, թէ ի՞նչ պիտի ընեն թզուէկները:

Ճիշտ կէս գիշերին անոնք սովորականին պէս կրբպակին մէջ յայտնեցան, և լոյսը վառելով նստան սեղանին առջեւ աշխատելու: Բայց երբ կաշի տեղ զգեստները նկատուցին, զարմացած իրար երես նայեցան և գործիքները ձեռքերէն վար դրին: Զգեստները ատենլով, հասկցան թէ իրենց համար էր, իսկոյն շտապեցին հագնել: Երբ հագած լմնցած էին, սկսան ուրախութիւններէն պարել, վազվատել ու ցատկել: Եւ այսպէս քանի մը վայրկեան լւարճանալէ յետոյ, յանկարծ անյայտ եղան:

Այս վայրկեանէն սկսած, կօչկակարն ու իր կինը այլեւս թզուէկները չտեսան: Սակայն անոնց թողած գործիքներով, կօչկակարը ահագին հարստութեան տէր դարձաւ և երջանիկ ապրեցաւ իր կնոջը հետ: Եւ երբ մեռնելու եղան, իրենց ամբողջ հարստութիւնը կտակեցին որբերուն, աղքատներուն ու անբաղձներուն:




## ԹՈՉՈՒՆԷ ՄԸ ԳՏՆԻԱԾ ՏՂԱՆ

Ժամանակով անտառապահ մը կար: Ասիկա որսի երթալու սովորութիւնն ունէր: Օրին մէկն ալ, երբ դարձեալ որսի էր ելած անտառի մթին խորերը, իրեն այնպէս եկաւ, թէ մանկիկ մը սաստիկ կուլար: Ականջները սրիլով մօիկ ըրաւ, ուզելով հասկնալ, թէ լացի ձայնը ո՞ր կողմէն կուգար: Երբ մտքին մէջ ճշդեց կողմը, այլեւս առանց վայրկեան մը կորոնցնելու, քույրն արագութեամբ դէպի այն կողմն ուղղեց: Հոն շատ բարձր ծառի մը վրան նշմարեց լացող մանկիկը, և երկնքի վրայ տեսաւ սեւ ու խոշոր թռչուն մը, որ ծառին ուղղութեամբ դէպի ամպերը կը սաւառնէր:

Անտառապահը ճարպիկութեամբ ծառն ի վեր մագլցելով, տղան գրկած վար բերաւ: Չորս կողմը նայեցաւ տղուն մայրը գտնելու յուսով, մտածելով թէ մօրը քնացած պահուն է, որ այն սեւ խոշոր թռչունը կարողացեր էր գրկէն յափշտակել տղան: Բայց իր բոլոր փնտռտուքները անօգուտ եղան: Տղան մայրը չըկար ու չըկար: Անտառապահը քանի մը վայրկեան լուռ խորհելէ վերջը, վճռեց հետը տուն տանիլ և իրեն հօգեզաւակ ընել: Ուստի մանկիկը ամուր մը համբուրելով, դէպի տուն ճամբայ ինկաւ:

Անտառապահը բացի մէկ պտըտիկ սիրուն աղջիկէ մը, այս աշխարհի վրայ ուրիշ ոչ ոք չունէր: Ծամբան, գտած տղուն խոնաւ աչուէկները համբուրելով, կը խորհէր: — «Մաննիկս ոչ մայր ունի և ոչ ալ ընկեր կամ ընկերունի մը, ահա իրեն թէ քոյր թէ լնկերունի: Ասկէ աւելի լաւ մխիթարութիւն մը չէի կրնար տալ իմ որբացած ու անընկեր գառնուկիս» —:

Այսպէս ինքնիրեն խօսելով տուն հասաւ: Մաննիկը



FANNY HILL-TON

Սև խոտը բռնուն մը յախճակած էր տղան:

նախ օտարոտի վարեցաւ, սակայն մէկ երկու օրէն այնքան խոր սիրել սկաւ, որ գտնուած տղան ամէն բանէ վեր էր իրեն համար: Երթալով երկու պղտիկներուն միջև սրտերու այնպիսի ամուր կապ մը ստեղծեցաւ, որ ոչ մէկ ուժ չէր կրնար աղեւս դանոնք իրարմէ բաժնել:

Սակայն գէշն այն էր, որ անտառապահը կերակուր եփող պառաւ կին մը կը պահէր իր տունը, և որու մասին կ'ըսէին, թէ կախարդ կին մըն էր: Այս կինը իրկուն մը, սովորութեան հակառակ, երկու մեծ դռներով ջուրը կրելէ յետոյ, բազմաթիւ անգամ նորէն ջրորը գնաց եկաւ, մինչև որ պղնձէ մեծ կաթսան լցեցաւ: Մաննիկը, որ նկատու էր պառաւ կախարդի այս անբացատրելի պատրասութիւնները, զարմացած հարցուց անոր.

— «Ի՞նչ բանի համար այսքան շատ ջուր կը կրես» —

— «Եթէ կը խոտանաս ինձի, որ մէկու մը բան չես ըսեր, պատճառը քեզի կը յայտնեմ» — պատասխանեց պառաւ կախարդը:

Մաննիկը խօսք տուաւ: — «Լաւ» ըսաւ պառաւը, — «Վաղն առտու շատ կանուխ, երբ հարիկդ անտառ որսի երթայ, այս ջուրը ես պիտի եռացնեմ, և գտնուած տղան մէջը նետեմ» — Խեղճ Մաննիկը սարսափելի վախէն քիչ մնաց պիտի պօռար, բայց որովհետև խօսք էր տուած, ձայն, ծպտուն չը հանեց: Եւ իրաւ ալ երբ յաջորդ առտուն կանուխանց անտառապահը որսի գնաց, պառաւ կախարդը սկսաւ իր չար դիտաւորութիւնը գործադրելու ետեւէ ըլլալ: Սակայն անտառապահի մեկնիլը տղաք լսած էին իրենց անկողնին մէջ պառկած: Մաննիկը աղեւս չը կրնալով համբերել, բերանը բացաւ և գտնուած տղուն այսպէս խօսեցաւ.

— «Եթէ դուն խօսք կուտաս ինձի, որ հաւատարիմ ըլլաւ, ես ալ քեզի յախտեան հաւատարիմ կ'ըլ-

լամ» — Գտնուած տղան իր բոլոր սրտով խոստացաւ, և Մաննիկն ալ իսկոյն անոր յայտնեց, թէ ի՞նչ բանի համար կախարդ պառաւը իրիկունը այնքան շատ ջուր էր կրած: — «Իսկ հիմա» — աւելցուց ան, — «որպէսզի անիծեալը մեզի հոս չը գտնէ, շուտ մը տեղերնէս ելլենք հագւինք, և միասին տունէն փախչինք» —:

Ըսեմնին ու ընեմնին մէկ եղաւ: Տեղերէն ցատկեցին, հագւեցան և տունէն փախան:

Երբ ջուրը եռալ սկսաւ, պառաւ կախարդը տղոց սենեակը մտաւ, գտնուած տղան տանելու: Եւ սաստիկ յուսահատեցաւ, երբ տեսաւ թէ երկուքն ալ հոն չէին: — «Ի՞նչ պատասխան պիտի տամ, երբ անտառապահը տուն վերադառնայ և տղաքը հոս չտեսնէ» — կ'ըսէր ինքնիրեն, ձեռքերը տորթելով: — «Ո՛հ, այսպէս չըլլար, պէտք է որ մարդիկ հանեմ և փնտռել տամ» — Սենեակէն դուրս գալով, մօտակայ խրճիթէն երեք մանչ կանչեց և պատելիեց, որ անպատճառ տղաքը գտնեն և տուն բերեն, ուր որ ալ գացած ըլլան:

Երկու անմեղուկ աղջիկները անտառի խորին էին փախած և մուտ թաւուտի մը մէջ պահւրտած: Երբ երեք մանչերուն դէպի իրենց թագստոցը գալը նշմարեցին, միաբերան խնդրեցին Սատուծմէ, որ անոնց աչքերուն չերեւան, և վարդենի մը դառնան: Վայրկեանին կատարուեցաւ իրենց խնդրանքը. Մաննիկը վարդենիի թուփը դարձաւ և գտնուած տղան ալ վարդ մը:

Երբ մանչերը թաւուտը հասան, ծառերէն ու վարդենիէ մը զատ ուրիշ բան չը տեսան: Երկար այս այն կողմ տղաքը փնտռեցին, բայց ի գուր: Պարապ յոգնութենէ մը յետոյ վերադարձան և յայտնեցին պառաւ կախարդին, թէ ծառերէն ու բացւած վարդով վարդենիէ մը զատ, ուրիշ բան մը չը տեսան:

— «Ը՛հ, ապուշներ» — պողաց կախարդը, և սկսաւ

զանոնք յանդիմանել ու հայհոյել: — «Ի՞նչ վարդը քաղելու և հետերդ բերելու էիք, Դէ՛հ, գացէք հիմայ և ըսածիս պէս ըրէք» —:

Մանչերը հովի պէս անտառ վազեցին:

Պատիկ աղջիկները, երբ նշմարեցին մանչերու վերադարձը, և նախազգալով իրենց գլխուն գալիքը, Մաննիկը խնդրեց եկեղեցի մը դառնալ, իսկ գտնուած տղան ալ անոր մէջի սեզանը: Եւ ճիշդ այսպէս ալ եղաւ: Երբ մանչերը հասան, վարդենին իր բացւած վարդով անյայտացեր էր, անոր տեղ կը տեսնէր հին եկեղեցի մը:

— «Գործ ունինք» — զարմացած ըսին մանչերը,

— «Վարդենին անյայտացեր է, մեզի ուրիշ բան մը չի մնար բնել, եթէ ոչ առջի անգամուան պէս դատարկաձեռն տուն վերադառնայ» —:

Ս.յսպէս ըսելով ետ դարձան և տարօրինակ եղելութիւնը պառաւ կնոջ պատմեցին:

— «Ս՛հ, դուք խենթ էք» — պողաց կախարդը.

— «Պէտք է որ ես անձամբ երթամ և տեսնեմ» — Եւ երեք մանչերը հեռն առած, իյնալով, ելլալով ճամբայ ընկաւ դէպի թաւուտը:

Երբ պատիկ աղջիկները բաւական հեռուէն նշմարեցին պառաւ կախարդին գալը, — «Ս՛խ,» — աղաղակեց Մաննիկը արցունքը աչքին — «Երանի՛ թէ ես լճակ մը դառնայի, և դուն պատիկ կարաս պ'ըլլայիր իմ կապոյտ ջուրերուս մէջ» — ըսեմն ու դառնալը մէկ եղաւ: Եւ երբ պառաւ կախարդը լճակին քովն հասաւ, ծոցեալ որ ջուր խմէ, որովհետեւ շատ էր ծարւած: Կարասը մօտեցաւ ու բռնեց կախարդի մագերէն, և զայն լճակը ձգեց: Մանչերը սաստիկ վախցած՝ փախան կորան, իսկ պառաւ կախարդը տեղն ու տեղը խեղդուեցաւ:

Ս.յն ատեն պատիկ աղջիկները դարձեալ իրենց մարդկային կերպարանքն ստացան և ուրախ զարթ տուն վերադարձան: Մինչեւ խորին ձերութիւն միասին և երջանիկ ապրեցան, ու երբ մեռան, կտակ ըրին, որ զիրենք թաւուտին մէջ թաղեն, հո՛ն, ուր վարդենին էր իր բացւած սիրուն վարդով:

## ԵՐԱԽՏԱԳԷՏ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ

Ատենօք գթասիրտ մարդ մը կար, որ գրեթէ աղքատ էր: Ասիկա աշխարհի մեծութեան ու գեղեցկութեան մասին շատ էր լսել, ուստի և ցանկացաւ, որ ինքն ալ անգամ մը տեսնէ: Ունեցած չունեցածը հաւաքեց, ծախեց ծխեց, և ընդ ամէնը քանի մը ոսկի դրամ գրպանը դրած՝ ճամբայ ելաւ, գեղեցիկ ու ընդարձակ աշխարհը տեսնելու փափաքով: Շատ չանցած գիւղ մը հասաւ, ուր զարմանքով տեսաւ, թէ ինչպէս գիւղին պատանիները փողոցէ փողոց կը վազվզէին, աղաղակներ արձակելով: — «Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահիր» — հարցուց մեր մարդը անոնց:

— «Տեսէ՛ք» — պատասխանեցին անոնք — «Մուկ մըն ենք բռնած, և մեր հաճոյքին համար անոր պարել կուտանք: Նայեցէ՛ք, նայեցէ՛ք, որքան ծիծաղաշարժ է, ինչպէս կը ցատկուտէ» —:

Իայց մեր ճամբորդը գթաց խեղճ անասնիկին վրայ, և անոնց ըսաւ. — «Ես ձեզ դրամ կուտամ, մուկը ազատ ձգեցէ՛ք» —: Իրաւ ալ քսակը հանեց և քիչ մը դրամ տալով ազատեց խեղճ մուկը իր չարչարանքէն: Մուկը, երբ զգաց, թէ զինքն այլեւս չեն հալածեր, աւճապարանքով փախաւ և մօտերը գտնուող ծակէ մը ներս սողալով՝ կորուեցաւ:

Յետոյ այս գիւղէն դուրս ելլելով, ուրիշ գիւղի մը միջով անցաւ: Հոս ալ տեսաւ, որ շատ մը աղաք էչ մը բռնած՝ զանազան ոստումներ ընել կուտային անոր և ճաթելու չափ կը խնդային վրան: Մէկ քանին ոտքերով կը զարնէին, ուրիշներ սրածույր փայտերով կը մխթէին, այնպէս որ խեղճ կենդանիին վայրկեան մը հանգիստ



Դրամ տալով ազատեց արջը

չէին ձգեր: Այս բանին չը դիմանալով, մեր ճամբորդը դարձեալ քիչ մը դրամ տուաւ և էջը ազատեց անոնց ծաղր ու ծանակէն, մանաւանդ անգուլթ հարւածներէն:

Ասկէ վերջը եկած գիւղին մէջ, երկուսասորդները արջ մը պարելու էին վարժեցուցած: Հետն ինչալով կը ստիպէին որ արջը մուտայ, և չափազանց գոհ էին այս բանէն: Ասոնց ալ մեր ճամբորդը քիչ մը դրամ տալով՝ ազատեց արջը, որ չորս թաթերուն վրայ դարձեալ քալելով, գոհ և ուրախ վազեց դէպի մօտակայ անտառը:

Այս գիւղին շատ մօտը ընդարձակ և սիրուն քաղաք մը կար: Մեր ճամբորդն ալ շիտակ հոս եկաւ: Եւ որովհետև դրամը այլևս սպառած էր, ուստի վճռեց աշխատիլ քիչ մը տտեն, դրամ հաւաքել և իր ճամբորդութիւնը նորէն շարունակել:

Սմիս մը աշխատելէ յետոյ սակայն, գործին տէրը չ'ուզեց ընաւ դրամ վճարել իրեն: Մեր ճամբորդը նախ խնդրեց և յետոյ աղաչեց, որ իրեն պէս աղքատ մարդու մը քրտինքի իրաւունքը չը կտրէ: Բայց երբ տեսաւ, թէ անօգուտ էր, արդար բարկութեան մէկ վայրկեանին բռնեց աղւոր մը տփեց իր անիրաւ ու չար տէրը: Այս աղմուկին վրայ, ոստիկանները գալով ձերբակալեցին մեր ճամբորդը և շիտակ բանտ տարին: Եւ որովհետև չկայ աշխարհիս վրայ տեղ մը. ուր արդարութիւնը գործադրեն, այնպէս ալ հոս, դատաւորները վճռեցին մեր ճամբորդը սնտուկի մը մէջ փակել և ջուրը ձգել: Այս սնտուկի կափարիչը ծակծկւած էր, օդ ներս մտնելու համար, և մէջը կտոր մը հաց ու աման մը ջուր էին դրած:

Մեր խեղճ և անմեղ ճամբորդը զրուխը զարմանքով շարունակ շարժելով, մտաւ սնտուկին մէջը: Ոստիկանները կափարիչը ամուր մը կղպելէ վերջը, զայն ջուրը նետեցին, ինչպէս որ դատաւիճիւն էր: Եւ երբ ճամբորդը




Վանաւակիւնները պալատ երաւիք

տխուր տրտում մտուկին մէջ նստած ջրի հոսանքնի վար կ'երթար, զգաց յանկարծ, որ մտուկը եզերքին դէմ կ'առնէր, և բան մը փակաղակը կը քաշէր, կը խառնէր, կը խածնէր: Որքան մեծ եղաւ զարմանքը, երբ քիչ վերջը պարզ լսեց փակաղակին քարերու վրայ իյնալն ու կափարիչին բացելը: Իսկոյն մտուկին մէջէն ելերքը ցատկեց և հիացումով հոն տեսաւ իր երեք հին բարեկամները՝ մուկը, էշը և արջը, որոնք շտապեր էին օգնութեան վազել, որովհետեւ ինքն անոնց նկատմամբ բարի էր գտնւած:

Այս բոլորը շատ լաւ, բայց հիմա ի՞նչ ընելին չէին գիտեր: Խորհուրդ ընելու նստեցան. և յանկարծ նշմարեցին, որ հաւկիթի նմանող ձերմակ սիրուն քար մը կը լողայ ջրին վրայ: Արջը քարը տեսնելուն պէս ազաղակեց. — «Բաղդը մեզի կը ժպտի, այս քարը կախարդական քար մըն է, և զայն ունեցողը ինչ որ ցանկայ նոյն վայրկեանին կը կատարւի» —: Ճամբորդն այս լսելուն պէս քարը ջրէն հանեց, և ցանկացաւ ունենալ պալատ մը, պարտէզ մը և ձիեր: Եւ հազիւ թէ բերանը գոցած էր, երբ ինքզինքը շքեղ պալատի մը մէջ նստած գտաւ, ընդարձակ ու գեղեցիկ պարտէզ մը շուրջը և ընտիր ձիերով լեցուն ախոռներ անոր մէկ անկիւնը: Եւ այս բոլորը այնքան հրաշալի, այնքան երազական էին, որ ան նայելէ և հիանալէ չէր կշտանար բնաւ:

Քանի մը ամիս վերջը այս կողմով վաճառականներ անցան. — «Տեսէ՛ք, տեսէ՛ք» — ասոնք իրարու կ'ըսէին, — «Շքեղ պալատը, վերջին անգամ որ մենք ասկէ անցանք, հոս ամայի և անապատ էր, աւաղէն զատ ուրիշ բան մը չը կար» —: Եւ որովհետեւ չափազանց հետաքրքիր էին գիտնալ, թէ այս ի՞նչպէս էր պատահեր, ուստի պալատին դուռը զարկին տեղեկանալու համար: Պալատին երջանիկ տէրը դուռը բացաւ. Երբ հարցուցին, թէ ե՞րբ է չինել տւած այս փառաւոր պալատը:



Ինճիկները գտաւ հրատալի պալատի մը մէջ,  
սփանջելի պարտէզով

Ճամբորդը պատասխանեց, թէ — «Ինչքա չեմ չինել տւած, և ոչ ալ ուրիշ մը, կախարդական քար մը ունիմ, այս պալատը սնոր հրաշքն է» — «Այս ինչ տարօրինակ քար մը բլլալու է» — ըսին վաճառականները ինքնիրենց: Ճամբորդը նկատելով անոնց զարմանքն ու հետաքրքրութիւնը, խնդրեց որ հաճին ներս մտնել և քարը տեսնել:

Վաճառականները կրկնել չուէին հրաւերը, և ներս մտան: Երբ քարը տեսան, բուռն ցանկութեամբ վայն գնել ուզեցին, և իրրու գին, առաջարկեցին բոլոր իրենց ապրանքները, ինչ որ հետերնին ունէին: Մեր ճամբորդը չր կրնալով անոնց աղաչանքը մերժել, քարը փոխեց թանկարժէք ապրանքներուն հետ:

Բայց հագիւ թէ քարը ձեռքն կրած էր, որ աղքատութի մը մէջ ամէն բան դարձեալ անյայտագաւ, ինչպէս որ նոյն ձեռով ալ կրած էր: Եւ դարձեալ մեր խեղճ ճամբորդը ինքզինքը գտաւ կղզւած սնտուկին մէջ բանտարկւած, քովը կտոր մը ցամաք հաց և աման մը ջուր: Իր հին և հաւատարիմ բարեկամները՝ մաւկը, էշը և արջը, երբ պատահած դժբախտութիւնը տեսան, իսկոյն օգնութեան փութացին: Բայց չուտով համոզեցան, թէ այս անգամ իրենց ուժերէն վեր էր փակագակը կտորել, որովհետեւ այս երկրորդը շատ աւելի հաստատուն էր, քան առաջինը: Ուստի արջն ըսաւ — «պէտք է որ մենք դարձեալ կախարդական քարը գտնանք, եթէ ոչ մեր բոլոր ճիգերը անօգուտ կը մնան» —:

Այս բոլորը պատահած միջոցին, վաճառականները հանգիստ շտամ էին հինին տեղը չինւած աւելի փառաւոր պալատի մը մէջ: Առանց տեսչորդ ժամանակ կորսնցնելու կենդանիները դէպի նոր պալատը ճամբայ ինկան: Երբ արդէն ձօնեցած էին՝ արջն ըսաւ. — «Մուկ, ներս մտիւր և ճամբաներն ու սանդուխները լաւ մը աչքէ անցուր, տես թէ ինչպէս պիտի գործի սկիւնք, զուր պտորտիկ ես, ոչ ոք քեզի չի նշմարեր» —:

Մուկը ներս մտաւ, և քիչ վերջն եկաւ ու՝

—«Անօգուտ է»— ըսաւ Թիսուր ձայնով մը, — «Էս ամէն կողմ նայեցայ, նոյն իսկ սրահն ալ աչքէ անցուցի: Կախարդական քարը կարմիր մետաքսէ հիւսւած կապով մը կախւած է մեծ հայելիին տակը, և որու շորս կողմը պահապաններ կան, մանաւանդ վախցայ մեծ կատուէ մը, որ կրակի պէս շողացող աչքերով շիտակ ինծի կը նայէր» — : — «Վերադարձիր» — ըսին միւսները, — «Ե սպասէ մինչև որ պալատին մեծ տէրը պառկի և քնանայ: Այն ատեն ծակէ մը ներս կը սողաս, և մինչև անոր անկողինն քովը կ'երթաս: Երբ այս ամէնը ըրեր ես, անոր քիթը կը խածնես և մաղերէն կը քաշես» — :

Մուկը վերադարձաւ և ճիշդ այնպէս ըրաւ, ինչպէս որ իր ընկերները իրեն պատերեր էին: Պալատին տէրը սարսափելի բարկացած՝ տեղէն վեր ցատկեց, և քիթը չփելով կը պոռար բարձրաձայն. — «Այս կատունները բանի մըն ալ պէտք չեն գար, կը ձգեն որ մկները մինչև անկողինս գան, քիթս խածնեն և մաղերս փրցնեն» — : Եւ կատուին պոչէն բռնելով սննեակէն դուրս նետեց կատղած:

Յաջորդ գիշերը, երբ տէրը քնացաւ, մուկը դարձեալ սննեակը սողաց, և սկսաւ արագ արագ կարմիր մետաքսէ թելը կրծել, ուրկէ կախարդական քարն էր կախւած: Երկար չանցած թելը կտրեցաւ, և քարը վար իյնալով՝ գլորեցաւ մինչև դուռը, Բայց խեղճ պտրտիկ մուկը չարաչար աշխատանքէն սաստիկ յոգնած էր, ուստի պահ մտած ընկերներուն ըսաւ. — «Մէկդ մօտեցէք և քարը վերցուցէք» — : Իսկոյն էլ իր ոտքն երկընցուց և քարը աւելի առաջ քաշեց, իսկ արջն ալ դայն իր թաթին մէջ առաւ պահեց: Երեքով միասին այլևս առանց ետևենին նայելու դէպի գետը վազեցին: Սակայն կախարդական հրաշագեղ պալատը քարին հետ նոյն վայրկեանին չքացեր էր: Երբ գետին եղերքը հասան, էլ յուսահատ դէմքով մը ըսաւ. — «Հիմա ինչպէս անտուկին քովը պիտի հասնինք» — :

— «Դիւրին է» — պատասխանեց արջը, — ես շատ

չաւ լողալ կրնամ. դուն, էլ ընկեր, քու առաջի ոտքերդ ուսերուս դիր: Քեզի լաւ պահէ և քարն ալ բերանդ առ: Իսկ գայով քեզի, մուկ ընկեր, դուն ալ կրնաս աջ ապանջիս մէջ մտնել» — :

Երբ այս կարգադրութեամբ պատրաստ էին, արջն սկսաւ լողալ: Բայց դուն տես բանը, որ վայրկեան մը վերջը, գնաց եկաւ այս նեղ պարագային բռնեց առջին պարծենկոտութիւնը: Ինքզինքը փառաբանելով կ'ըսէր՝ — «Մենք քաջեր ենք, այնպէս չէ՞, սիրելի էչս: Քու կարծիքդ ինչ է?» — Բայց էլ բերանը չը բանալու հարկադրուած ըլլալուն, ձայն չէր հաներ: — «Ինչո՞ւ ինձի չես պատասխաներ» — , կը շարունակէր արջը, — «դուն բաւականին անկիրթ մէկն ըլլալու ես, քանի որ չես պատասխաներ քեզի հետ խօսողին» — :

Այս յանդիմանական խօսքերուն վրայ էլը այլևս չը կրցաւ երկար պահել լեզուն, և բերանը բացաւ: Բայց հազիւ թէ խեղճ բերանը բացեր էր, և անա կախարդական քարը նորէն ջուրն ինկաւ:

— «Ես քեզի պատասխանել չէի կրնար» — ըսաւ էլը — «որովհետեւ քարը բերանս էր, ակուսներուս ետեւը, և անա հիմա կորսեցաւ ան, մեղաւորը դուն ես» — :

Արջը շատ ամչցաւ իր ըրած յիմարութեան վրայ, բայց դիրքը պահելով ըսաւ. — «Հոգ չէ՛, միջոց մը կը խորհինք դարձեալ դայն իսկոյն գտնելու» — : Եւ դէպի եղերք դարձաւ լողալով, Երբ ցամաք էին ելած, խորհուրդի նստեցան, և վճռեցին ձայն տալ բոլոր գորտերուն, մեծով պզտիկով, և անոնց յայտնել, — «Շատ մը քարեր բերէք, որ հաստատուն պատ մը շինենք, որպէս զի դուք պաշտպանուած ըլլաք ձեր թշնամիներուն դէմ» — :

Գորտերը այս հրաւերն ընդունելով՝ եռանդով գործի կ'պան, և ամէն կողմերէ քարեր բերին, ծեր ու խոշոր գորտ մը դանդաղօրէն եկաւ վերջապէս, ետևէն քաշելով կախարդական քարը: Երբ արջը տեսաւ այս բանը, ուրախութենէն սկսաւ ցատկել ու պարել, էչն ալ հասկնա-



Բոլոր գործերուն ձայն եւին

լով արջի ուրախութեան պատճառը, ինքն ալ սկսաւ իր բոլոր ուժերովը զուլ: — «Մենք գտանք մեր փրկարարը» — պարելով շարունակ կը պօռար արջը: Վերջը ծեր գորտէն քարն առնելով, անոր շնորհակալութիւն յայտնելով՝ յանձնարարեց որ երթայ յայտնէ իր բոլոր բարեկամներուն, թէ գործը լաւ կ'ընթանայ, թող այլ եւս նեղութիւն և յոգնութիւն չը քաշեն: Եւ նաեւ այն թէ, այժմ շատ ժամանակ չ'ունինք, վերադարձին պատը կը շինենք:

Յետոյ մեր երեք ծանօթները, առաջւան դիրքով, սկսան արագութեամբ դէպի սնտուկը լողալ, զոր բացին կախարդական քարին շնորհիւ: Եթէ վայրկեան մը ուշ հասած ըլլային, խեղճ և բարի ճամբորդը սովամահ եղած պիտի գտնէին սնտուկին մէջ: Որովհետեւ շատոնց էր, որ հացը պարպած էր և ջուրը լմնցած: Մտածումէն, սարսափէն ու անօթութենէն կիսամեռ ճամբորդը, երբ քիչ մը կաղզուրեցաւ, քարը ձեռքն առնելով՝ համբուրեց գայն և ցանկացաւ, որ ինքզինքը նորէն այն պալատին մէջ տեղափոխուած գտնէ:

Վայրկեան մը վերջը ցանկութիւնը կատարուած էր: Ինքը բազմած էր հոյակապ պալատին ամենաշքեղ սրահներէն մէկուն մէջ: Շուրջը պարտէզն էր դարձեալ հազարան ծառերով ու ծաղիկներով, ինչպէս նաեւ փոստները, ուր կապած ընտիր ձիերու երամները, իրենց աշխոյժ վրնչիւններով օդը կը թնդացնէին:

Երեք երախտագէտ կենդանիները պալատին մէջ մնացին մինչև իրենց շունչը փչելը:

Իսկ ճամբորդը այս դառն փորձէն յետոյ ընաւ չը դադրեցուց իր բարութիւնները: Շուտով իր պալատը եղաւ ապաստանարան մը աշխարհի բոլոր աղքատներուն զրկւածներուն և թշուառներուն համար: Մինչև հիմա ալ կը շարունակէ ան իր անսահման բարութիւնն ու բերարութիւնները, եթէ միայն քարը ձեռքէն չէ հանած:


## ՄԱՅՐ ՉՈԼԼԷՆ ԵՒ ՈՍԿԷ ԱՆՁՐԵՒԸ

Ժամանակով այրի կին մը կար, որ երկու աղջիկ ունէր: Ատոնցմէ մէկը զմայրիկ գեղեցկութիւնով մը օժտուած էր և չափազանց աշխատասէր, միւսը սաստիկ տգեղ էր և շատ ծոյլ:

Բայց և այնպէս, այրի կինը տգեղ ու ծոյլ աղջիկն էր, որ շատ աւելի կը սիրէր, որովհետեւ ան իր հարազատ աղջիկն էր, մինչդեռ միւսը երկրորդ ամուսինն էր հետը բերած: Խորթ աղջիկը պարտական էր աման բոլոր գործերը տեսնել: Գոնէ հետը քիչ մը լաւ վարէին. օ՛, ո՛չ, ընդհակառակը, թէ՛ անատունի պէս կը բանեցընէին, և թէ՛ միեւնոյն ատեն անիկա խորթ մօրն ու քրոջը աչքերուն փուշն էր: Այս խեղճ աղջիկը ստիպւած էր առտւան ծէգին, աքլորներու կանչին հետ, անկողինէն ելլել և տունը հոգալ, ջուր կրել և ուրիշ գործեր տեսնել: Երբ ասոնք աւարտած էր, պարտաւոր էր առանց հանգստանալու երթալ ճամբու եզերքի ջրհորին քովը նստիլ և ճախարակով թել մանել ամբողջ օրը: Երբ ինքը այսպէս չարաչար կ'աշխատէր, միւսները իրենց փափուկ անկողիններուն մէջ «խը՛ռ, խը՛ռ» — կը քնանային:

Այնքան շատ կը մանէր, այնքան շատ, որ արիւնը մատերէն դուրս կը ցայտէր: Եւ դեռ խորթ մայրն ու քրոջը զինքը կը յանդիմանէին, անօթի կը պահէին և կը ձեծէին:

Օր մը, մատերը այնքան շատ արիւնեցան, որ ճախարակը կարմիր ներկեցաւ: Աղջիկը սարսափահար, զայն իսկոյն ջուրը կոխեց լալու համար, որովհետեւ գիտէր գլխուն գալիքը: Բայց խեղճին անբաղդութիւնը



Խեղճ աղջիկը խորթ մօրն ու քրոջը աչքերուն փուտն էր

տես, ճախարակը ձեռքէն սահելով՝ ջրհորին խորն ան-  
յայտացաւ: Սկսու բարձրաձայն լալ և տուն վագել,  
պատմելու համար անցած դարձածը: Խորթ մայրը լսելով  
արկածը, սաստիկ յանդիմանեց և ըսաւ անգուլթ կեր-  
պով. — «Ինչպէս որ կորսնցուցիր, դնա՛ այնպէս ալ գը-  
տիր: Զ'ըլլայ որ իմանամ, թէ առանց ճախարակին տուն  
ես վերադարձեր» —: Ասոր վրայ յուսահատ աղջիկը ջր-  
հորին քովը վերադարձաւ, առանց կարողանալու միջոց  
մը խորհիլ, թէ ի՞նչպէս ճախարակը հորէն հանէ:

Երբ այսպէս իր անկարողութեան մէջ, խոր վիշտէն  
կը տառապէր, յուսահատաբար ինքզինքը հորը նետեց,  
և մինչեւ յատակն իջաւ: Երբ խելքը գլուխն եկաւ,  
ինքզինքը գտաւ հրաշագեղ մարգագեհանի մը մէջ, ուր  
արեւը անմաման պայծառութեամբ մը կը շողշողար, և  
ուր հազարան ծաղկունք դրախտային բուրմունք մը կը  
տարածէին չորս կողմը: Աղջկան այնպէս կը թւէր, թէ  
քաղցր երազի մը մէջ կը գտնէր: Կամաց կամաց սկսաւ  
մարգագեհանին երկայնքն ի վեր առաջանալ: Բաւակա-  
նին քալելէ յետոյ, հասաւ փուռի մը առջեւ, որ լսփ  
լեցուն էր հացով: Հացը կ'աղաղակէր. — «Հանէ՛ զիս,  
հանէ՛ զիս այստեղէն, եթէ ոչ կ'այրւիմ: Բաւական ա-  
տեն է, որ եփւելու եմ դրւած» —: Այս որ լսեց իս-  
կոյն վազեց և հացը դուրս քաշեց:

Ի՞նչ մը աւելի անդին, ծառ մը տեսաւ խնձորներով  
ծածկւած, և ծառը իրեն կ'աղաղակէր. — «Ճնցէ՛ զիս,  
ցնցէ՛ զիս: Իմ բոլոր խնձորներս հասած են» —: Եւ աղ-  
ջիկը ծառը ցնցեց: Իսկոյն հազարաւոր խնձորներ վար  
թափեցան, այնպէս որ մէկ հատիկ անգամ վրան չը  
մնաց: Վերջապէս պղտիկ խրճիթի մը քովն եկաւ, ուր  
կարճահասակ պառաւ մը դուռնէն դուրս կը նայէր: Այս  
պառաւը սարսափելի մեծ ակռաներ ունէր, և որովհե-  
տեւ ասոնք ժանիքներու պէս դուրս ցցւած էին, աղ-

ջիկը լիզապատառ ուզեց փախչիլ, բայց պառաւը անոր  
ետեւէն կանչեց. — «Մի՛ վախնար, իմ սիրունիկ պըզ-  
տիկս, քովս կեցիր: Եթէ կը համաձայնիս ինծի հետ  
այրիկ և իմ տանս գործերը մաքրութեամբ ընել, ես  
քու նկատմամբ բարի կ'ըլլամ, և քեզի լիառատ կը  
վարձատրեմ: Միմիայն մասնաւոր խնամք պիտի տաս  
անկողինս լաւ յարդարելու: Ամէն առտու պիտի թափես  
անկողինս և աղւոր մը ձաղկես, այնպէս որ փետուրները  
մէջէն թռչին: Որովհետեւ երբ անկողինս փետուրները  
թռչին, մարդիկ կ'ըսեն թէ ձիւն կուգայ: Ես Մայր  
Հօլլէն եմ \*):

Պառաւը այնքան հաճելի ձեւով մը կը խօսէր, որ  
աղջիկը համաձայնեցաւ քովը մտնալ և աշխատիլ:

Աղջիկը մեծ խնամքով և ուշադրութեամբ կը կտ-  
տարէր իր աշխատոնքները, պառաւին աչքը մտնելու և  
անոր սիրելի ըլլալու համար: Մասնաւորապէս ամէն առ-  
տու կը թափէր ու կը ձաղկէր անոր փետուրէ անկո-  
ղինները: Այսպէսով նախանձելի և երջանիկ կեանք մը  
կը վարէր հոն: Ոչ մէկ վէճ, ոչ մէկ յանդիմանութիւն  
կամ բարկացած խօսք չէին խանգարեր իր անցուցած  
խաղաղ կեանքը: Մինչդեռ իր խորթ մօրը քով ասկէ  
աւելի չարաչար կ'աշխատէր ու կէսանօթի կը մնար,  
հոս, ընդհակառակը, աւելի քիչ կ'աշխատէր, և կերածն  
ալ ամէն օր կարմրեցած միս էր, զանազան ախորժա-  
համ բանջարեղէններով, պտուղներով ու անուշեղէննե-  
րով միասին:

Սակայն այնպէս պատահեցաւ, որ պառաւի քով  
երկարատեն մնալով՝ կամաց կամաց տիրիլ սկսաւ, յի-  
շելով իր մայրենական տունը: Ծիշդ է, թէ հոն օր ու  
արեւ չէր տեսներ, և հոս բիւր անգամ հանգիստ էր ու

(\*) Դեռ այսօր ալ, Գերմանիոյ որոշ մասերուն մէջ, երբ ձիւն  
կուգայ կ'ըսեն. — «Մայր Հօլլէն իր անկողինը կը շտկէ» —

երջանիկ, սակայն հոն գոնէ իր հօր և մօր դերեզմանները այցելել կրնար, և անոնց հողաթումբրու ծաղիկները խնամել, որոնք իրեն միակ մխիթարութիւնն էին, և որոնց պատմելով իր քաչած տառապանքները, գաղտնի և անբացատրելի հաճոյք մը կ'ըգգար: Հոս չէր տառապէր, բայց և այն հաճոյքէն ալ զրկւած էր: Ուստի սրտին մէջը բուն դրած հայրենացաւը չը կրնալով խեղդել, օր մը ըսաւ Մայր Հօլլէին:

— «Ճիշդ է որ խորթ մօրս տունը ես յաճախ տառապած եմ, ինչպէս նաև ճիշդ է, որ հոս շատ երջանիկ եմ, սակայն չը պիտի կարենամ այլևս երկար մընալ» — :

Մայր Հօլլէն անոր պատասխաննց. — «Ես երջանիկ եմ տեսնելով, որ մայրական տունդ կը վիստուես. և որովհետև ինձ հաւատարմօրէն ծառայեցիր, ուստի անձամբ քեզի ճամբայ ձգելու պիտի ընկերանամ» — :

Այս ըսելով բռնեց աղջկան ձեռքէն և զայն առաջնորդեց մեծ դռան մը տակը: Եւ երբ այս դռուը բացուեցաւ և աղջիկը սեմէն անցաւ, պատրաստ իր քայլն առնելու, յանկարծ ոսկէ անձրև մը տեղաց: Ոսկիները կը կպչէին մազերուն, զգեստներուն և մարմնին վրան. այնպէս որ շատ չը տեսած ոտով գլխով ոսկիներով ծածկուեցաւ:

— «Այս բոլորը քու կդ են» — ըսաւ պառաւը, — «որովհետև դուն աշխատասէր էիր» — : Այս ըսելով անոր յանձնեց նոյնպէս ջրհորն ինկած ճախարակը, Յետոյ դռուը աղջկան վրայէն գոցուեցաւ: Աղջիկը շուրջը նայեցաւ, թէ ո՞ր կը գտնուէր, և մեծ եղաւ զարմանքը, երբ հաստատեց, թէ իր մայրական տունէն շատ չէր հեռացած: Աճապարանքով իրենց բակը մտաւ, և աբլորը որ աղբիւրին վրան էր թառած՝ սկսաւ կանչել,



—«Կուկուլի կո՛ւ, կուկուլի կո՛ւ»

Աղւոր աղջիկ, բարով եկար դու— :

Աղջիկը տունէն ներս մտաւ և ուղղակի մօրը քով գնաց : Եւ որովհետեւ ամբողջովին ոսկիով էր ծածկւած, ուստի և սիրով ընդունւեցաւ : Եւ երբ մայրը մանրամասն տեղեկացաւ, թէ ի՞նչ միջոցով էր ձեռք բերեք այսքան հարատու թիւնը, միեւնոյն բաղդաւորութիւնը սկսաւ ցանկալ իր հարազատ աղջկան համար, և այդ վայրկեանէն ուզեց, որ ան ալ ջրհորին քով թեյ մանէ : Տգեղ և ծոյլ աղջիկը նախանձէն մղւած յանձն առաւ ճախարակը ձեռքն առնել : Բայց որովհետեւ չէր ուզեր աշխատիլ, ուստի ճախարակով մատը քիչ մը ծակեց. և յետոյ սիրտ ըրաւ նաեւ ձեռքը փուշերուն մէջ կոխել հանել, որպէսզի այնքան արիւնի, որ կարողանայ ճախարակը կաս կարմիր ներկել : Երբ այսքանը ըրէր էր, ճախարակը ջրհորը նետեց, ինքզինքն ալ ետեւէն :

Ինչպէս գեղեցիկ աղջիկը, ինքն ալ, երբ խելքը գլուխն եկաւ, ինքզինքը հրաշագեղ մարգագետնի մը մէջ գտաւ, և միեւնոյն ճամբան բռնած առաջացաւ : Երբ փուռին առջեւն հասաւ, հացը սկսաւ ազաղակել. —«Մ՛, հանէ՛ զիս, հանէ՛ զիս այստեղէն, եթէ ոչ կ'այրիմ : Արդէն բաւական ատեն է որ եփւելու եմ դրւած»— :

—«Արւոր նայեցէ՛ք, մէջ մը» — ըսաւ ծոյլը, — «Բեզի համար ձեռքերս պիտի աղտոտեմ»— :


Եւ իր ճամբան շարունակեց :

Յետոյ խնձորնիւնին քովն եկաւ, որ կ'աղաղակէր իրեն. —«Յնցէ՛ զիս, ցնցէ՛ զիս, որովհետեւ բոլոր խընձորներս հասած են»— :

—«Ի՛նչ յիմարութիւն» — պատասխանեց ծոյլը, — «Եթէ յանկարծ մէկ քանին գլխուս ինձան»— :

Եւ իր ճամբան շարունակեց :

Վերջապէս հասաւ Մայր Հօլէի խրճիթը : Եւ որովհետեւ խորթ քրոջմէն արդէն լսած էր անոր ժանիքածե ակումներու մասին, տեսած ատենը բոլորովին չը վախցաւ. և ընդունեց յօժարակամ անոր քով ծառայել : Առաջին օրը, ինքզինքը շատ լաւ պահեց, շատ աշխատեցաւ, և ամէն բան ըրաւ ինչ որ պառաւը կարգա-



դրեց, որովհետեւ միշտ անոր տալիք ոսկիներու մասին կը մտածէր : Բայց յաջորդ օրը սկսաւ ծուլանալ, իսկ երրորդ օրը՝ ա՛լ աւելի : Այլևս չէր ուզեր մէկ անգամէն անկողնէն ելլել, երբ պառաւը ձայն կուտար : Ասկէ գատ պառաւի անկողինը շատ գէշ կը շտկէր, և լաւ չէր թա-

փեր ու ձաղկէր, որպէսզի փետուրները մէջէն թռչէին:

Այս բոլորը միասին սաստիկ բարկացուցին պառաւը այն աստիճանի, որ ստիպւած կղաւ դայն քովէն հեռացնել: Բայց այս բանին աղջիկը գաղտնի կ'ուրախանար, որովհետեւ կը մտածէր, թէ ոսկէ անձրեւը իր վրան ալ թափուելու ժամանակը այլեւս հասած է: Ուստի Մայր Հօլլէն առաջնորդեց ծոյլ աղջիկը միեւնոյն դռան քով, ուր, փոխանակ ասկէ անձրեւ թափելու վրան, սեւ ձիւթ թափեց: — «Ահաւասիկ քու վարձքդ, ըրած ծառայութեանդ փոխարէն» — ըսաւ պառաւը, և վրայէն ամուր մը դուռը փակեց: Ծոյլը, ամօթէն երեսը ծածկած՝ ոտքէն մինչեւ մազերուն ծայրը սեւ, կաշուն ձիւթ, մոլորած քայլերով տուն վերադարձաւ: Պատին վրայ թառած աքլորը, երբ տեսաւ ծոյլ աղջիկը՝ սկսաւ կանչել.

— «Կու կու լի կո՛ւ, կու կու լի կո՛ւ,

Աղտոտ աղջիկ, բարով չը գայիր դուն» —:

Մայրը իր հարազատ աղջկան վիճակը տեսնելով՝ նախանձէն ու կսկիծէն պայթեցաւ: Գեղեցիկը, հզոր և սիրուն իշխանի մը երկրին թագուհի դարձաւ, իսկ տգեղը՝ մուրացիկ մը: Երկուքին ալ, մինչև մահանք օրը, մայր Հօլլէն ստացած ծառայութեան վարձքը վերաներէն անկարելի եղաւ վար առնել: Եւ աշխատասէրը ոսկիով թաղեցաւ, իսկ ծոյլը սեւ ձիւթով:



Առտուները անկողնէն չ'ը ուզե ելլել

## ՈՍԿԷ ԹՌԶՈՒՆԸ

Շատ ու շատ դարեր մեզմէ առաջ հուշակաւոր թագաւոր մը կար: Ասիկա պարտեզ մը ունէր, ուր ծառ մը կար, որ ոսկէ խնձորներ կուտար: Սակայն նկատուի էին որ ամէն սնգամ, երբ ոսկէ խնձորները կը հասուննային, ամեն գիշեր մէկ հատը կը գողցուէր: Այս բանին վրայ թագաւորը բարկացած՝ հրամայեց էր պարտիզպանին, որ գիշեր ցերեկ անքուն պահպանութիւն ընէ ծառին: Պարտիզպանը ծեր ըլլալով իր անդրանիկ որդին զրկեց գիշերը հսկելու, բայց կէս գիշերուան մօտիկ, ասոր քունը տարաւ, և առտուն խնձոր մը կը պակսէր: Ասոր վրայ պարտիզպանը իր միջնեկ որդին զրկեց յաջորդ գիշերը հսկելու համար. բայց կէս գիշերին ասոր ալ քունը տարաւ, և առտուն ուրիշ հատ մը եւս կը պակսէր: Այն ատեն կրտսեր տղան ինքզինքն առաջարկեց. գալիք գիշերը ծառին պահպանութիւնն ընելու: Պարտիզպանը նախ չը թոյլատրեց, բայց զաւկին խնդրանքին չը դիմանալով՝ վերջ ի վերջ համաձայնեցաւ. և տղան գնաց պառկեցաւ ծառին տակ ու սկսաւ ուշադրութեամբ լրտեսել:

Երբ կէս գիշեր եղաւ գլխուն վերն թեթեւ աղմուկ մը լսեց, և տեսաւ բոլորովին գուտ ոսկիէ թռչունի մը գայլը: Եւ երբ թռչունը կը կը փորձէր իր կտուցով խնձորներէն մէկը փրցնել, պարտիզպանի կրտսեր տղան տեղէն վեր ցատկելով՝ աղեղը քաշեց: Բայց արձակուած նետը թռչունին բնաւ վնաս մը չը հասցուց, անիկա իր պոչէն փետուր մը միայն վար ձգելով՝ թռաւ գնաց: Յաջորդ առտուն ոսկէ փետուրը թագաւորին տարին, որ իսկոյն իր մտերիմ խորհրդականները քովը կանչել տուաւ: Բոլորն ալ համակարծիք գտնուեցան, թէ եթէ միայն մէկ



Լաւեց տղայը եւ նա մը արձակեց աղւետին

հասիկ փետուրը սյուքան թանկագին արժէք մը ունի, ապա թռչունը ինքը ամբողջ թագաւորութեան չափ զին պէտք էր որ ունենար: Այն ատեն թագաւորն ըսաւ. — «Կ'ուզեմ թռչունն ունենալ, պէտք է որ ես զայն ձեռք ձգեմ» —:

Պարտիզպանին անդրանիկ որդին թագաւորի ցանկութիւնն խմանալով՝ խկոյն ճամբայ ինկաւ, յուսալով շատ չանցած ձեռք կը բերէ ոսկէ թռչունը:

Շուտով անտառ մը հասաւ, և անոր մուտքին քով աղւետի մը հանդիպեցաւ: Աղիզը քաշած մաղ էր մնացեր, որ նեսն արձակեր ու կինդանին սպաններ, երբ աղւէտն այսպէս խօսեցաւ իրեն.

— «Ձիւ մի՛ սպաններ, եթէ կուզես որ քեզի բարի խորհուրդ մը տամ: Ես լաւ գիտեմ քու նպատակը, դուն կուզես ոսկէ թռչունը ձեռք ձգել: Ուրեմն լսէ: Երբ այս իրիկուն գիւղ մը համնիս, հոն պիտի գտնես երկու օթեւաններ դէմ դէմի, մէկին մէջէն մեծ աղմուկներ և ուրախութեան աղաղակներ պիտի լսես: Այս օթեւանին մէջ մի՛ մտներ, գիշերը անցնելու համար մէկալը մտիր, որքան ալ որ անիկա խեղճ ու կրակ չէնք մը քեզի երեւայ» —:

Սակայն պարտիզպանի անդրանիկ տղան ինքն իր մէջն ըսաւ. — «Վարինի գաղան մը ի՞նչպէս կրնայ այդպիսի բաներ գիտնալ» —: Եւ պատասխանի տեղ նետ մը արձակեց խեղճին վրան, բայց չկրցաւ դպցնել: Աղւէտը պոչը կրծսակն առնելը ու անտառին մէջ անյայտանալը մէկ բրաւ:

Երիտասարդը ճամբան շարունակեց, և իրօք իրիկւան դէմ տղւետի ըսած գիւղը հասաւ, ուր որ երկու դէմ դէմի օթեւանները կային: Մէկին մէջ կ'երգէին ու կը պարէին՝ սոսկալի աղմուկ մը չորսդին տարածելով, մէկալը օղտոտ և խղճալի տեսք մը ունէր, և միտակա-

տան մը պէս ալ լուռ էր ներսը : — «Ես ապուշ մը պիտի եղած ըլլամ, որպէս զի այս ազատ գերեզմանատունը գիշերեմ, ու չերթամ այն հրաշալի օթեւանը, ուր կեանքը կ'եռայ, երգով ու պարով» — Այսպէս ըսելով առանց տատանելու մտաւ ուրախ օթեւանէն ներս, և ինքզինքը հաճոյքի ու խրախմանքներու տւած՝ մոռցաւ ոսկէ թռչունն ու իր հայրենիքը :

Այսպէս բաւական երկար առեմն սնցաւ : Եւ որովհետեւ անդրանիկ որդին չէր վերադառնար, միջնեկը ճամբայ ինկաւ : Ասոր ալ գլխուն եկաւ իր մեծ եղբօր եկածը : Թէեւ աղէտը իր բարի խորհուրդը տւեր էր, բայց երբ ան դէմ դէմ օթեւաններով գիւղն էր հասեր, մեծ եղբայրը պատուհանին առջեւը նստած ըլլալով, ուր ուրախութիւնն ու պարերը կը շարունակէին, միջնեկին ստիպեր, գայթակեցուցեր և դռնէն ներս էր կրցեր մտցնել տալ : Աս ալ իր կարգին հաճոյքով ու խրախմանքներով տարւելով, մոռցաւ և ոսկէ թռչունը, և իր հայրենիքը :

Դարձեալ բաւական ժամանակ անցաւ : Կրտսեր որդին տեսնելով, որ իր երկու եղբայրները չը վերադարձան, այս անգամ ինքն ալ ուզեց ճամբայ իյնալ, դէպի լայն աշխարհ, եղբայրներուն հետ նաեւ ոսկէ թռչունը անպատճառ գտնելու երդումով : Սակայն հայրը սկզբները բնաւ չէր ուզեր այդ մասին լսել, սրովհետեւ չափազանց շատ կը սիրէր իր վերջին զաւակը, և կը վախնար, թէ մի գուցէ աս ալ որ և է վտանգի մը հանդիպելով, այլևս իրեն գիրկը չը կրնար վերադառնալ : Բայց երկար մաքառելէ յետոյ չը կրցաւ արգիլել, վերջապէս, և տան խաղաղութեան սիրուն, թողուց որ ինքն ալ երթայ :

Աս ալ իր միւս եղբայրներուն պէս, երբ անտառի մուտքն հասաւ, պատահեցաւ միեւնոյն աղէտին, լսեց

անոր բարի խորհուրդը, սակայն միւսներուն պէս անգութ չը վարեցաւ խեղճ կենդանիին հետ. բնաւ մտքէն չ'անցուց զայն սպաննելու փորձ մը ընել : Աղէտն ալ գնահատելով անոր վարմունքը, այսպէս ըսաւ. — «Նստէ պոչիս վրայ, այսպէսով թէ հանգիստ և թէ արագ կը ճամբորդես» — Տղան յանձն առաւ, և աղէտը մեկնեցաւ կայծակի մը արագութեամբ :

Երբ գիւղն հասան, տղան աղէտի խորհուրդին հետեւեցաւ, և, առանց շորս կողմը նայելու, մտաւ խեղճ ու կրակ օթեւանը, և հոն հանգիստ կերպով լուսցուց գիշերը : Յաջորդ առտուն, երբ կը պատրասուէր ճամբայ իյնալու, աղէտը քովն եկաւ ու ըսաւ իրեն.

— «Հիմա ուղիղ պիտի երթանք, մինչեւ որ դղեակի մը առջեւ հասնինք, որու շուրջը վաշտ մը գօրք կը քնանայ՝ խորունկ քունով : Չ'ըլլայ թէ վախնաս : Հասնենուս պէս դուն դղեակը կը մտնես, և սենեակէ սենեակ, սրահէ սրահ անցնելով՝ կը հասնիս վերջապէս պղտիկ սենեակ մը, ուր պիտի տեսնես ոսկէ թռչունը փայտէ վանդակի մը մէջ, ճիշտ քովը կախուած պիտի գտնես զուտ ոսկիէ վանդակ մը, որը գորահանդէսներու միջոցին դուրս կը հանի : Չ'ըլլայ թէ թռչունը իր խեղճ և հասարակ վանդակէն հանելով՝ ոսկիէ վանդակին մէջ դնես. վերջը շատ կը զղջաս» — :

Այս խօսքերն ըսելով, աղէտը տարածեց պոչը, և տղան վրան առնելով՝ մեկնեցաւ ուղիղ գծի մը պէս, և այնքան արագ, այնքան արագ, որ թէ իր և թէ տղուն մտղերը քամիէն ասեղներու պէս կը ցցուէին :


Երբ դղեակին առջեւն հասան, տղան ամէն բան աղէտի նկարագրածին պէս գտաւ : Առանց ժամանակ կորսնցնելու պոչէն վար իջաւ, և սենեակէ սենեակ, սրահէ սրահ անցնելով, մտաւ այն սենեակը, ուր փայտէ վանդակի մը մէջ պահուած էր ոսկէ թռչունը, և ճիշտ քովն ալ ոսկիէ վանդակն էր կախուած :

—«Միծաղելի պիտի ըլլայ»— ըսաւ ինքնիրեն :  
 —«այսքան անգին թռչուն մը այսպիսի խեղճ վանդակով  
 տանիր» — : Բացաւ վանդակին դուռը , և թռչունը մէ-  
 ջէն դուրս հանելով , զայն դրաւ ոսկիէ վանդակին մէջ :  
 Բայց տեղափոխելու պահուն , թռչունը այնպիսի սարսա-  
 փելի աղաղակ մը հանեց , որ երկինք երկիր թունդ և-  
 լան : Բոլոր վաշտը արթնցած ներս վալեց , և զինուոր-  
 ները տղան շղթայելով՝ տարին թագաւորին առջևը :  
 Թագաւորը սաստիկ յուզեաձ , թէեւ կ'ուզէր զայն նոյն  
 վայրկեանին կախել , սակայն օրէնքը յարգելուն համար  
 հրամայեց առայժմ մուտ գնդանը նետել , մինչեւ որ  
 դատաւորները իրենց վճիռը արձակեն : Յաջորդ առտուն  
 բոլոր դատաւորները ժողովի նստան , և երբ լսեցին վը-  
 կայութիւններն ու տղուն խոստովանանքը , միաձայնու-  
 թեամբ զինքը մահուան դատապարտեցին : Սակայն դա-  
 տաւորներէն մէկը , որ կոյր էր , և միայն տղուն ձայնը  
 կը լսէր , յանկարծ ձայնը բարձրացնելով ըսաւ .

—«Կեցէ՛ք , թէեւ ես ալ մահուան պատիժը արժանի  
 գտայ , սակայն վայրկենապէս ուժեղ խայթ մը զգացի  
 խղճիս մէջ : Տէ՛ր արքայ և դատաւորներ , այս տղուն  
 ձայնէն կը հասկնամ , թէ քաջ և ուղղամիտ մէկն է ,  
 ուստի կ'առաջարկեմ յետաձգել պատիժը և ազատել ,  
 եթէ կարողանայ բռնել և մեր թագաւորին բերել ոսկիէ  
 ձին , որ քամիին պէս արագ կը վազէ» — : Այս առա-  
 ջարկութիւնը խելացի և արդար երևցաւ ամէնքին ալ :  
 Եւ թագաւորը , ոչ միայն խոստացաւ տղուն կեանքը ,  
 այլ նաեւ ոսկիէ թռչունը իրեն նւիրել , եթէ յաջողէր  
 ոսկիէ ձին բերելու :

Այս պայմանով տղան արձակեցին իր կապանքնե-  
 րէն , և պատուի խօսք առնելով իրմէն , ազաւ ձգեցին  
 զինքը :

Տղան ճամբայ ինկաւ ընկճեաձ և յուսահատ , երբ



Երբ այսօր հանցին Թագաւորին առջև



Երբ դղևաին հասան, աղան ամէն բան աղւէսի պատմածին պէս դտաւ :

Առանց նկատելու տղան ներս մտաւ դղեակէն, և աղամանդէ աւազանով սրահը գտնալով, անկիւն մը քաշեցաւ, իշխանուհուն սպասելու : Ճիշտ կէսգիշեր էր, որ իշխանուհին իր սովորութեան համեմատ եկաւ լուսանոցը ընելու : Տղան անոր ներս մտնելը նշմարելուն պէս, դուրս գալով իր պահած տեղէն, համբուրեց զայն : Եւ իշխանուհին կարծես կախարդւած, կամք տրւաւ անոր ետեւէն երթալու : Սակայն լալով խնդրեց անկէ, որ թող տայ երթալ իրեն, հորն ու մօրը վերջին հրաժեշտը տալ : Տղան նախ մերժեց, բայց ան ա՛յլ աւելի լացաւ, ու ոտքերն ինջալով՝ աղաչեց չը մերժել իրեն այդ բանը, որ ողորմութեան պէս բան մը պիտի ըլլար : Տղան այլևս չը կրնալով դիմանալ, թող տրւաւ : Իշխանուհին քովէն մեկնելու վարկեանին, հայրն արթնցաւ իր քունէն, և անոր հետ ամբողջ դղևակին մարդիկն ալ միասին : Եւ անցուղարձն իմացելով՝ տղան շղթայի զարնեցաւ և բանտ նետեցաւ :

Յաջորդ առտուն տղան հանեցին թագաւորին և դատաւորներուն առջևը : Մահան պիտի դատաւարտէին, սակայն իշխանուհու լալազին ազերտանքէն աղււած, թագաւոր հայրը հետեւեալ պայմանը դրաւ :

— «Աղջիկս այն պարագային կ'առնես, եթէ ուրիշ օրւան մէջ պատուհաններուս տեսարանը արգիլող բլուրը մէջտեղէն վերցնես» — :

Սակայն այս բլուրը այնքան մեծ էր, այնքան խոշոր էր, որ եթէ ամբողջ աշխարհի մարդիկ օգնութեան գային, չը պիտի կրնային տեղահան ընել : Տղան ճարահատեալ գործին կ'պաւ, և եօթը օր, վեց գիշեր աշխատելէ յետոյ, գրեթէ դեռ ընաւ բան մը ըրած չէր : Սատիկ յուսահատեցաւ, և ինչ ընելը չէր գիտեր : Այս թըշ-



Տղան կամբուրեց իշխանուհին

առ կացութեան մէջն էր, երբ հին ծանօթ աղւեսը դարձեալ օգնութեան հասաւ: Եօթներորդ օրւան գիշերը կ'սկսէր, ուստի աղւեսն ըսաւ.


— «Մեղք ես, շատ ես յոգնած և յուսահատ, պառկէ և միամիտ քնացիր, ես քու տեղդ կ'աշխատիմ» — Ծղան այդպէս ալ ըրաւ: Եւ երբ առտուն քունէն արթնցաւ, խոշոր բլուրը արդէն անյայտացած տեսաւ: Ուրախութիւնը անպատմելի էր. երախտագիտութեամբ աղւեսին թաթիկներն համբուրելով, վաղեց դղեակը թագաւորին ներկայանալու և իր արդար իրաւունքը անկէ պահանջելու: Թագաւորը կատարած հրաշքին վրայ ապշած, թէև շատ կիսասիրտ, բայց և այնպէս ստիպւած եղաւ իր արքայական խօսքն յարգել, մանաւանդ որ այդ քանը իշխանունու սրտովն էր: Եւ ահա լծեցաւ արքայական ոսկեպատ կառքը իր վեց զոյգ ընտիր ճերմակ նփոյգներով, և իր մէջն առած երկու երջանիկները, թուաւ դղեակէն դուրս: Աղւեսը, որ հեռուէն այս բոլորը կը տեսներ, վազելով հասաւ կառքին, և ըսաւ աղուն. — «Պէտք է որ դուն երեքն ալ ձեռք ձգես. իշխանունին, ոսկիէ ձին և ոսկէ թուչունը» —:

Ծղան բարերար աղւեսը կառքին մէջն առնելով, պատասխանեց.

— «Իրաւ է, սակայն ի՞նչպէս յաղթել դժւարութիւնները» —:

— «Շատ դիւրին է, եթէ միայն խօսքս մտիկ ընես» — ըսաւ աղւեսը: — «Երբ գեղեցիկ իշխանունին պահանջող թագաւորին ներկայանաս, անիկա քեզի տեսնելուն պէս սաստիկ պիտի ուրախանայ. և իսկոյն ոսկիէ ձին բերել պիտի տայ և քեզի յանձնէ: Ծարպիկ շարժումով մը իշխանունին առ դաւակի և կոյժակի մը պէս սլացիր» —:

Այս ծրագիրը հրաշալի կերպով գլուխ եկաւ: Եւ



Ոսկեքն ինկաւ և աղաչեց

Արք իշխանուհին ամէն վտանգէ ազատուած, կը դռնէր թանկագին ձիուն վրայ, որ կայծակնորու արագութեան հետ մրցիլ կրնար, աղէէն ըսաւ.

—«Երբ դղեակն հասնիս, ուր ոսկէ թռչունն է, ես իշխանուհուն հետ մօտիկները տեղ մը կը պահւըտիմ, և գուն ներս կը մտնես: Երբ անոնք տեսնեն, թէ դուն ձին բերեր ես, իսկոյն ոսկէ թռչունը վանդակով քեզի կը նւիրեն: Չ'ըլլայ թէ ձիէն վար իջնես, վրան կեցիր առանց չարժեղու, և երբ արդէն ձեռքդ է վանդակը, ակնթարթի մը մէջ սլացիր»—:

Այս ալ յաջողութեամբ կատարուեցաւ:


Եւ ոսկէ թռչունը ձեռք ձգած, տղան դարձեալ իր գաւակն առնելով իշխանուհին, շարունակեց ճամբան, մինչև որ հսկայական ծառերով անտառի մը խորերը հասաւ: Հոս վար իջան ձիէն, քիչ մը հանգստանալու համար: Եւ ահա աղէտը նորէն յայտնուեցաւ, և այսպէս խօսեցաւ.

—«Սպաննեցէ՛ք զիս, և կտրեցէ՛ք գլուխս ու թաթերս»—: Սակայն տղան, բացարձակապէս մերժեց այդ ոճիրը գործել:

—«Լս'ւ՛ր»— ըսաւ աղէտը —«ամէն պարագայի կ'ուզեմ քեզի բարի խորհուրդ մը ստալ. զգուշացի՛ր մահապարտի մը արեան գինը վճարելով, զայն սղատել իր պատիժէն, և երկրորդ, գետակի մը եզերքը նստելէ»—:

Աղէտն այս խորհուրդը տալով, և երկա՛ր ու թախճալից իշխանուհուն ու տղուն նայել յետոյ, յուսահատ շարժուով մը կորաւ անտառի մթութեան մէջ:

Տղան և իշխանուհին ձիով ու թռչունով հրապուրուած, աղէտին անյայտանալէն վերջն զգացին անոր բացակայութիւնը: Տղան կը խորհէր աղէտի տուած վերջին խորհուրդին վրայ, և ինքն իրեն կ'ըսէր՝ —«Եթէ այդ է միայն, զժամբ բան մը չէ մահապարտ մը չը գնկն ու գետակի մը եզերքը չը նստելը»—:



Շարունակեց ճամբան, իշխանուհին գաւակն առած

Բաւական հանգստանալէ յետոյ, նորէն ձի նստան  
և ճամբանին շարունակեցին: Երկար չը տեւած հասան  
ճիշդ այն գիւղը, ուր երկու օթեւաններն էին, և ուրկէ  
տղան իր եղբայրներէն բաժնւած էր:

Գիւղին մէջ խոշոր աղմուկ մը լսելով, տղան ուզեց  
իմանալ, թէ ի՞նչ էր պատահեր: Գիւղացիք պաասախա-  
նեցին, թէ երկու մարդ կախելու կը տանին: Տղան ամ-  
բոխին աւելի ու աւելի մօտիկնալով, զարմանքով ու  
կսկիծով տեսաւ, թէ այդ երկու մահապարտներն իրեն  
եղբայրներն էին, որոնք իրենց ունեցած չունեցածը վատ-  
նելով, սխեր էին ամէն տեսակ գողութիւն և ոճիր  
քործել: և որոնց համար ալ կախաղանի դատապար-  
տւեր: — «Արդեօք միջոց մը չկա՞յ դանձնք ազատելու»  
հարցուց տղան:

— «Մի միայն մէկ միջոց մը կայ», պատասխանեցին  
գիւղացիք, — «այն է, եթէ դուք ահագին գումարով  
մը կամենաք անոնց կեանքերը գնել» —: Այս լսելուն  
պէս, եղբայրական սէրը իր մէջն արթննալով, առանց  
երկար բարակ մտածելու, վճարեց դրամը, որքան որ  
ուզեցին: Եւ երկու եղբայրներն ալ մահէն ազատած, ի-  
րեն հետ միասին ճամբայ ինկան:

Երբ այն անտառն հասան, ուր աղւէսը սուաջին  
անգամ իրենց հանդիպեր էր, տեսարանը այնքան գե-  
ղեցիկ էր և օղը այնքան քաղցր և զով, որ մեծ եղ-  
բայրներն ըսին. — «Հոս, գետակին եզերքը քիչ մը նըս-  
տինք, թէ հանգստանանք և թէ քիչ մըն ալ բան դը-  
նենք բերաննիս ու ծարաւնիս յագեցնենք:» —

Տղան բոլորովին մոռցեր էր աղւէսին սուած վերջին  
խորհուրդը, և եղբայրներուն ցանկութիւնը չը մերժելու  
համար, համաձայնեցաւ ձիէն վար իջնել և գետակին  
եզերքը նստիլ: Եւ այն վայրկեանին, երբ մտքէն բնաւ  
կասկած մը չէր անցներ, եղբայրները զաղտնապէս ան-



Պեղեցիկ բայց գուռգ իսխանուխին

ցան ետեւը և զինքը գետակին մէջ նետելով, առինձին, իշխանունին ու թռչունը, և պալատ վաղելով ներկայացան թագաւորին ու ըսին. — «Մենք ձեռք բերինք վերջապէս այս երեք անգին գանձերը, և ահա անվնաս գանոնք քեզի կը յանձնենք» — ։ Որտտի մը նման ամէնքն իմացան այս լուրը և ուրախութիւնն ու խրախճանքը ծայր տւաւ ամբողջ քաղաքին մէջ։ Պալատը լուսազարդւեցաւ, դրօշակները սկսան ծածանիլ պատուհաններէն, երաժշտութեան և երգի ձայներէն երկինքն ու երկիրը կը թնդային, սակայն ձին կը մերժէր ուտել, թռչունը չէր ուզեր երգել, և իշխանունին կուլար, կուլար։

Մինչդեռ այս բաները կը կատարէին քաղաքին մէջ, խեղճ տղան գետակին մէջ մնացած՝ յուսահատօրէն ելք մը կը փնտռէր, կեանքն ազատելու համար։ Գետակը թէեւ խորունկ չէր, սակայն բարձր ու ժայռուտ անցքի մը միջով հոսելով, դուրս չէր կրնար ելլել։ Դարձեալ անյիշաչար ու միշտ բարի աղւէսն էր, որ օգնութեան փութաց։ Սակայն այս անգամ բաւականին յանդիմանեց, ըսելով թէ՛ եթէ գոնէ այս անգամ իմ խօսքս մտախիլ ըրած ըլլայիր, այս փորձանքը գլխուդ չպիտի հանդիպեր։

— «Բայց և այնպէս, եղածը եղած է» — շարունակեց ան, — «Երկնս չի ձգեր, որ քեզի հոս թողնեմ։ Ես եզերքէն վար կը կախւիմ, դուն ալ պոչէս ամուր մը բռնէ» — Եւ վայրկեան մը վերջը, տղան ազատած էր արդէն։ Երբ աղւէսը այս բարերարութիւնն ալ կատարած էր, հետեւեալն յայտնեց տղուն. — «Մեծ եղբայրներդ քեզի կը լրտեսեն սպաննելու համար, եթէ օր մը աչքերուն երեւաս» — ։ Այս ըսաւ ու անյայտացաւ։

Տղան այս անգամ այլեւս երդում ըրաւ աղւէսին խօսքերը սրբութեամբ յարգել։ Ուստի գուշակելով գրկուն գալիքը, ծպտեցաւ մուրացկանի մը նման, և

ծածուկէն մտաւ թագաւորին պալատին պարտէզը : Հագիւ թէ ոտքը դռնէն ներս էր դրած , որ ձին սկսաւ ուտել , թռչունը երգել և իշխանուհին այլեւս չը լալ : Թագաւորը այժման զարմացաւ այս յանկարծակի փոփոխութեան վրայ , որ սաստիկ հետաքրքրութեամբ պատճառը հարցուց , եւ իշխանուհին իր գեղեցիկ աչքերը թագաւորին դարձնելով պատասխանեց .

— «Կը կարծեմ , թէ ամուսինս է վերադարձեր , օ՛հ ես որքան երջանիկ եմ հիմա» — : Եւ թագաւորին մանրամասն պատմեց ամբողջ եղելութիւնը , թէ եւ երկու եղբայրները զինքը մահով էին սպառնացիր , եթէ բերանէն խօսք մը փախցնէր : Թագաւորը խորապէս յուզւած հրամայեց , որ պալատի մէջ գտնւած բոլոր մարդիկը , պալատական թէ սպասաւոր իրեն առջեւը ներկայանան , որպէսզի իշխանուհին հնարաւորութիւն ունենայ զանոնք ամէնքն ալ տեսնելու :

Թագաւորին հրամանը իսկոյն գործադրւեցաւ , և պալատին թէ ներսը և թէ դուրսը որքան որ մարդ կար ամէնքն ալ մեծ սրահը հաւաքւեցան :

Հակառակ իր մուրացիկի մը պէս ծպուած ըլլալուն , իշխանուհին նոյն վայրկեանին աչքիւրէն ճանչցաւ իր ամուսինը , և վազելով զայն իր բազուկներուն մէջն առաւ :

Թագաւորին հրամանով այդ նոյն վայրկեանին երկու եղբայրները շղթայի զարնւեցան և իշխանուհին հանդիսաւոր կերպով պարտիզպանի կրասեր աղուն հետ պսակեցին :

Երբ թագաւորը մնտաւ . կրասեր աղան անոր յաջորդեց , ու աշխարհի ամենէն բարի , ամենէն երջանիկ և ամենէն հարուստ արքան եղաւ :

Շատ տարիներ յետոյ , երբ թագուհուն հետ օր մը անտառ էին գնացեր պտոյտի , յայտնւեցաւ յանկարծ



Իշխանուհին դարեցաւ լալ :

Ճերացած աղւէսը, և մօտիկնալով շատ պաղատեց, որ զինքը սպանեն և գլուխն ու թաթերը կտրեն: Եւ որովհետեւ պարտիզպանին կրտսեր որդին երգում էր ըրբեր աղւէսի ամէն մէկ խօսքը սրբութեամբ կատարել, ուստի և այս անգամ ակամայ կատարեց իր բարերարի տարօրինակ խնդրանքը: Եւ ի՛նչ հրաշք, սպաննւած և կտրուած աղւէսը յանկարծ մարդ դարձաւ: Եւ դեռ աւելի զտրմանահրաշք այն էր, որ ան թագուհու եղբայրն էր, որ կախարդ կլին մը պալատէն գողցած էր ատենօք և զայն աղւէս դարձուցած:



## ԾՈՒՌ ԿԶԱԿ ԹԱԳԱԻՈՐԸ

Ժամանակով հզօր թագաւոր մը կար, որ չափազանց զեղեցիկ ազլիկ մը ունէր, բայց այս ազլիկը այնքան գուռզ էր որ իր ձեռքը խնդրողները, ամենքն ալ, իրեն անյարմար գտնելէ զատ, զանոնք դեռ կը ծաղրէր ալ:

Օր մը թագաւորը մեծ խնձոյք մը տուաւ, և պալատ հրաւիրեց այն բոլոր մարդիկը, որոնք կը ցանկային իրեն փեսայ դառնալ:

Երբ հրաւիրեալները եկան, դահլիճին մէջ տեղաւորեցան իրենց մեծութեան աստիճանին համեմատ: Ամենէն գլուխը նստեցան թագաւորնեքը, յետոյ իշխանները, ասոնցմէ վար դուքսերը և ամենէն վարի կողմն ալ կոմսերը: Գեղեցիկ իշխանուհին շքեղօրէն հագնւած դահլիճ մտաւ, նայւածքը պտտցուց բոլորին վրայ, և ամէն մէկին համար ալ առարկութիւն մը գտաւ ընելու: Առաջինը շատ մեծ էր, — «գարեջուրի տակառի մը պէս կլոր է ըսաւ» — անոր համար: Երկրորդը շատ երկար էր, — «աւելի կոթ կը նմանի» — ըսաւ ասոր համար ալ: Յաջորդը փոքրակալմ էր, — «պուպրիկ մըն է» —, ազգականց: Զորրորդը տեգօն դէմք մը ունէր, ասոր անունն ալ — «դեղին երես» — դրաւ: Հինգերորդը շատ կարմիր էր, սա ալ — «աքլորի կատար» — կոչեցաւ: Վեցերորդը բաւականին ուղիղ կեցւածք չունէր, ուստի ասոր համար ալ ըսաւ, թէ կը նմանի ծառէն նոր կտրուած գաւազանի մը, զոր հացագործին փուռն են դրեր չորնալու համար: Այսպէս ամէն մէկին համար ծաղրական անուն մը կամ նմանութիւն մը կը գտնէր, բայց մասնաւորաբար կծու ծաղրի ենթարկեց հոն գտնուող բարի թագաւոր մը, որու կղակը իսկապէս շատ ալ կա-

նոնաւոր չէր: — «Սըւոր նայեցէք» — աղաղակեց բարձ-  
րաձայն խնդալով, — «այս խեղճն ալ կը կարծէ թէ ինքը  
կզակ մը ունի, այդքան կզակ սարեակն ալ ունի» —  
Եւ այս թագաւորը, ծուռ կզակ ծաղրանունն ստացաւ:

Սակայն թագաւոր հայրը սաստիկ բարկացաւ, տես-  
նելով որ իր գոռոզ աղջիկը ուրիշ մտադրութիւն չունի,  
եթէ ոչ իր հրաւիրեալները ծաղրով չարաչար, որոնք ա-  
տոր համար չէր որ հրաւէր էին ստացեր խնճոյքին ներ-  
կայ ըլլալու: Եւ իր արդար զայրոյթին մէջ երդում ը-  
րաւ ամուսնացնելու իր ամբարտաւան աղջիկը, պալա-  
տին դուռը ձեռոզ առաջին մուրացիկին հետ:

Երկու օր յետոյ թափառաչը իկ երաժիշտ մը ան-  
ցաւ պալատին քովէն, և պատուհաններուն տակը երգե-  
լով՝ ողորմութիւն խնդրեց: Եւ երբ թագաւորը այս  
բանն իմացաւ, հրամայեց որ երաժիշտ մուրացիկանը ներս  
բերեն: Թագաւորին հրամանն իսկոյն կատարեցաւ:  
Անխնամ ու աղտոտ արտաքինով մարդ մը ծառաները  
պալատէն ներս մտցուցին: Թագաւորին ու իշխանուհուն  
առջեւն ալ երգելով՝ ողորմութիւն մը խնդրեց: Թագա-  
ւորն ըսաւ.

— «Դուն այնքան լաւ երգեցիր, որ հոս ներկայ ե-  
ղող աղջիկս կ'ուզեմ քեզի կնութեան տալ» — Իշխանու-  
հին սարսափահար եղաւ, բայց թագաւորը շարունակեց —  
«Ես երդում եմ ըրած, հոսկէ անցնող առաջին մուրաց-  
կանին հետ քեզի ամուսնացնել, և ես հիմա երդումս  
կը կատարեմ» —:

Աղջիկը ձերունի հօր ոտքերն իյնալով՝ կ'աղաչէր ու  
կը պաղատէր, սակայն զուր տեղը:

Թագաւոր հայրը առանց կարեւորութիւն տալու ա-  
նոր արցունքներուն ու հեծկտանքներուն, հրամայեց  
իսկոյն քահանայ մը կանչել. և պսակը վայրկեան մը  
վերջը կատարեցաւ: Երբ ամէն բան լինցած էր, թա-  
գաւորն ըսաւ.

— «Հիմա պատրաստէ ամուսնիդ հետ մեկնելու,  
դուն այլեւս երկար չես կրնար կենալ պալատիս մէջ» —  
Եւ մուրացիկանը մեկնեցաւ պալատէն, հետը տանե-  
լով իշխանուհին: Ծուտով անտառ մը հասան, որ իր  
մեծութեամբ լիւ, ձոր ու դաշտ կը ծածկէր:

— «Որ՞նչ կը պատկանի այս սքանչելի անտառը» —,  
հարցուց իշխանուհին:

— «Ծուռ կզակ թագաւորին» — պատասխանեց ե-  
րաժիշտը, — «եթէ անոր հետ ամուսնանայիր, այս ան-  
տառը քուկդ պիտի ըլլար հիմա» —:

— «Ա՛խ, որքան թշուառ եմ ես» —, հառաչեց իշ-  
խանուհին, — «տար Աստուած սր ծուռ կզակ թագաւո-  
րին հետ ամուսնացած ըլլայիր» —: Յետոյ գեղեցիկ մար-  
գագետիններու միջովն անցաւ:

— «Որ՞նչ կը պատկանին այս դալարազարդ մարգա-  
գետինները» — հարցուց իշխանուհին:

— «Ծուռ կզակ թագաւորին» — պատասխանեց ե-  
րաժիշտը. — «եթէ հետն ամուսնացած ըլլայիր, հիմա  
ատենք բոլորն ալ քուկինդ կ'ըլլային» —:

— «Ա՛խ, որքան թշուառ եմ ես» —, հառաչեց իշ-  
խանուհին. — «տար Աստուած, որ ծուռ կզակ թագա-  
ւորին հետ ամուսնացած ըլլայիր» —: Վերջապէս հասան  
ընդարձակ և մարմարաչէն քաղաք մը:

— «Որ՞նչն է այս հոյակապ քաղաքը» — հարցուց  
հիացած իշխանուհին:

— «Ծուռ կզակ թագաւորին» — պատասխանեց ե-  
րաժիշտը. — «Եթէ անոր հետ ամուսնացած ըլլայիր, հի-  
մայ այս սքանչելի քաղաքը քուկինդ կ'ըլլար» —:

— «Ա՛խ, ես որքան սնդաղդ եմ» — հառաչեց իշ-  
խանուհին արտմած, — «ինչո՞ւ համար ես ծուռ կզակ  
թագաւորին հետ չամուսնացայ» —: — «Ինձի համար  
չատ անախորժ է» — ըսաւ երաժիշտը, — «որ դուն ու-



Այս, որքան դժբաղդ եմ եւ

որի ամուսին մը կը ցանկաս ունենայ, Միթէ եւ քեզի արժանի չե՞մ» — :

Այս քաղաքէն ալ հեռանալով, շատ գնացին, քիչ գնացին, և վերջապէս խեղճ ու կրակ պղտիկ խրճիթի մը առջեւ կանգ առին :

— «Ի՞նչ ողորմելի չէնք է» — ըսաւ իշխանուհին, — «որ՞նչ կը պատկանի այս մուկի ծակը» — : Եւ երաժիշտը անոր պատասխանեց. — «Աս ջու տունդ է և իմինս, ուր մենք պիտի ապրինք» — : — «Ո՛ւր են ծառաներդ,» — բարկութենէն պրուաց իշխանուհին :

— «Ծառաներ» — ըսաւ երաժիշտը — «դուն քեզի պիտի ծառայես : Դէ՛հ, հիմա կրակ ըրէ, եռալու համար ջուր դիր և ինծի ապուր մը պատրաստէ, որովհետեւ ես թէ յոգնած եմ և թէ անօթի» — :

Բայց իշխանուհին բացարձակապէս անտեղեակ էր, թէ ինչպէս կրակ կ'ընեն՝ և կամ ինչպէս կերակուր կը պատրաստեն, ուստի և երաժիշտը սախլած եղաւ անոր օգնել : Երբ ողորմելի ընթրիքը լմացան, եկան պառկելու : Բայց առտուն ձէգը ձէգին երաժիշտը իշխանուհին իր խորունկ քունէն արթնցուց, տուն դուռ լւարու և մաքրելու համար : Քանի մը օր այսպէս խեղճ ու կրակ ապրեցան, և երբ բոլոր պաշարը սպառած էր, ամուսինն ըսաւ .

— «Կնիկ, մենք այսպէս չենք կրնար շարունակել, միշտ ծախսելով և բնաւ չըջանելով : Պէտք է, որ դուն կողով գործել սորվիս» — :

Այս ըսելով, խրճիթէն դուրս ելաւ ուռինքը կրտսրիւ : Ետտ չանցած վերադարձաւ անագին բեռով մը, իշխանուհին ուղէր չ'ուղէր պիտի աշխատիր : Բայց որովհետեւ բոլորովին անվարժ էր, նուրբ մատերը չէին գլխմանար, կը ցաւէին ու կ'արիւնէին ճիւղերէն :

— «Կը տեսնեմ, թէ մէջէն չը պիտի կրնաս ելլել» —

ըսաւ ամուսինը — «Կործէ հիւսել, թերեւս այս ձեւը  
աւելի զիւրին ըլլայ քեզի» — :

Նորէն ան գործի նարեցաւ, և սկսաւ հիւսել, բայց  
անօգուտ, մատերը չէին զխմանար, և կ'արիւնէին :


— «Կը տեսնե՞ս, բանի մըն ալ պէտք չես» — ըսաւ  
երաժիշտը . «—աս ի՞նչ գէշ գործ բռնեցի ես : Զգէ ատ .  
ես կը մտածեմ ուրիշ բան մը : Բրուտ բարեկամ մը ու-  
նիմ, անկէ կաւէ ամաններ կ'առնեմ, և դուն շուկայի  
վրայ տեղ մը զանոնք կը ծախես» — :

— «Զիւնը գլխուս» — կը հառաչէր իշխանուհին,  
— «երբ շուկան նստիմ, ինձ ի՞նչ պիտի ըսեն տեսնողները,  
մանաւանդ, եթէ պալատէն մէկը անցնի և զիս հոն տես-  
նէ, ո՞վ գիտէ ինչպէս պիտի ծագուիմ» — :

Սակայն ամէն տրտունջ և աղերսանք անօգուտ էր .  
կամ պիտի աշխատէր և կամ անօթութենէ մեռնէր :  
Սկիզբները գործը շատ լաւ գնաց, որովհետեւ շատ մը  
երիտասարդներ, տեսնելով այս արտակարգ գեղեցիկ  
կինը, անկէ առուտուր կ'ընէին, յաճախ ալ դրամը  
կրկինը տալով մէկտեղ, ապրանքը իր տեղը կը թողնէին :  
Այր և կին բաւականին լաւ ապրեցան, մինչև որ ապ-  
րանքները ամէնքն ալ սպառեցան : Ամուսինը գործին  
յաջողութիւնը տեսնելով, նոր ապրանք գնաց, և դարձ-  
եալ կինը նստեցուց նոր ապրանքներու մէջտեղը, շու-  
կային մէկ անկիւնը : Բայց հազիւ թէ ծախելու էր սկսեր,  
որքէինով զինուոր մը ձիով անցաւ անկէ, և առանց առ-  
ջեւը նայիլու, ձին ուղղակի ամաններուն մէջ քշեց, և  
ամէն մէկը հազար կտոր ըրաւ : Իշխանուհին սկսաւ շու-  
կային մէջ բարձրաձայն լալ, և չը գիտէր ի՞նչ ընէր,  
կսկիծէն դողալով .

— «Աստուած իմ, ի՞նչ պիտի ըլլայ վիճակս» — կա-  
ղաղակէր : — «Ի՞նչ պիտի ըսէ ամուսինս» — :

Եւ այլեւս շուկան չկենալով, տուն վազեց ամուս-  
նին պատմելու եղելութիւնը :



Առտուն կանուխ օտիպաւած էր ելլել ևւ տունը հագալ

—«Ո՞վ կրնար կարծել, թէ դուն այնքան յիմար պիտի ըլլայիր, որ կաւէ ամաններդ փողոցի անկիւնը շարէիր, ուրկէ ամէն մարդ կ'անցնի: Բայց բաւական է լաս: Ես կը տեսնեմ, թէ դուն անընդունակ ես գործ մը կանոնաւոր ընելու: Պարտտ էի դացած իմանալու, թէ արդեօք խոհանոցին մէջ ծառայող աղախնի մը պէտք չունին: Համաձայնեցան քեզի ընդունելու, ամսական չը պիտի ստանաս, բայց կերակուրդ պիտի տան» —:

Այսպէս իշխանունէին դարձաւ խոհանոցի աղախին մը, և կ'օգնէր խոհարարուհուն մեծամեծ կաթսաներով կերակուրները եփելուն: Իսկ ամսականի փոխարէն ամէն իրիկուն երկու մեծ պուտուկներու մէջ կը թոյլատրէին իրեն, որ կերակուրի մնացորդները հետը տուն տանէր, ինքն ու ամուսինը ուտելու համար:

Շատ ժամանակ չէր, որ պալատի խոհանոցին մէջ կ'աշխատէր, երբ լսեց թէ թագաւորին անդրանիկ զաւակը, պալատին տաջեւէն մեծ շքախումբով պիտի անցնէր եկեղեցի երթալու համար, որովհետեւ պիտի ամուսնանար: Վաղեց գնաց դուռներէն մէկուն առջեւը կեցաւ ու դուրս նայեցաւ. և տեսնելով այն շքեղութիւններն ու փառքը, սիրտը սեղմեցաւ, մտածելով իր անձնական ճակատագրին վրայ: Խորունկ հառաչներ հանելով յուզած կուրծքէն, կը խորհէր թէ այդ շքեղութիւններն ու փառքը իրեն համար ալ կրնային ըլլալ, բայց ինքը իր ամբարտաւանութեամբն ու մեծամտութեամբը գանձը կորսնցուցած էր. և այս ողորմիկ դրութեանը հասած: Այսպէս մտածելով շատ ու շատ զղջաց իր անցեալին վրայ: Ծառաները վրան գլխով, հարսանեկան խնջոյքին աւելցածներէն անոր ալ բաժին հանեցին, զոր պուտուկներուն մէջ դնելով պահեց, իրիկունը հետը տուն տանելու: Յանկարծ թագաւորին զաւակը յայտնեցաւ, ոսկի թելերով բանւած մե-

տաքսէ զգեստներ հագած: Երբ ասիկա դռանն առջեւ կեցող գեղեցիկ և դեռատի կինը նշմարեց, հասաւ և ձեռքէն բռնեց, ըսելով, թէ պարի մէջ իր զոյգը պիտի ըլլայ ան: Բայց անիկա մերժեց և սաստիկ վախցաւ, որովհետեւ զարուրանքով և ամօթով կը տեսնէր, թէ ձեռքէն բռնողը ուրիշ մէկը չէր, եթէ ոչ ծուռ կղակ թագաւորը ինքը, որուն հետ մերժեր էր ամուսնանալ, զինքը կծու ծաղրելով ու արհամարհելով: Բայց ան բնու չէր ձգեր ձեռքը, այլ քաշելով, քաշկուտելով տարաւ մեծ սրահը: Այս քաշկուտութի միջոցին, պուտուկներու կափարիչները յանկարծ վար ինկան, և միսերը ցրեցան սրահի չորս կողմը: Բոլոր ներկաները սարօսափելի քահ, քահ մը փրցուցին և սկսան ծաղրել: մտերուն տէրը: Իշխանունէին այնքան գէշ եղաւ, այնքան սաստիկ ամնչցաւ, որ կը ցանկար այդ վայրկեանին հողին եօթը խաւերուն տակը մանել, Դէպի դուռը վազեց փախչելու համար, բայց ծուռ կղակ թագաւորը ետեւէն հասաւ, և սանդուխներուն վրայ բռնելով դարձեալ սրահ բերաւ, ըսելով՝

—«Մի վախնար բնաւ: Ես մուրացկան երաժիշտեմ, որ քեպի հետ միասին այն խեղճ խրճիթին մէջ կը բնակէի: Քեզ չափազանց սիրելուս համար էր, որ ստիպւած էի ծպուել այդ ձեւով: Ես եմ այն գինով զինուորը, որ շուկային մէջ տակն ու վրայ ըրաւ քու ապրանքներդ: Այս բոլորը ես դիտմամբ ըրի, որպէս զի կոտրեմ քու մեծամտութիւնդ, ու քաւել տամքու ամբարտաւանութիւնդ: Իսկ հիմա, ալ բաւական է, շատ տառապեցար, սակայն միեւնոյն տառապանքը քեզի ազնւացուց: Ուստի այս բոլոր պատահածները գէշ երազի մը նման մոռցիր յաւիտեան, որովհետեւ պիտի սկսինք մեր հարսանեկան խրախճանքները» —:

Թագաւորի մէկ նշանին վրայ, նաժիշտներու թա-

փոր մը ծայր տւաւ, որոնք իրենց ձեռքերուն վրայ առած արքայական հարսի թանկագին զգեստներն ու դարձեղէնները, մօտեցան իրեն :

— Ահաւասիկ ձեր տիրուհին, և իմ թագուհին — ըսաւ թագաւորը նաժիշտներուն : — «տարէք հագեցուցե՛ք ու զարդարեցե՛ք ասուածուհու մը պէս» : —

Նաժիշտները գլուխ ապլով, մեկնեցան թագուհու ետեւէն :

Եւ հարսանիքը սկսաւ չը լսած, չը տեսնած փառաւորութեամբ ու ուրախութեամբ : Իշխանուհու հայրն ալ իր պալատական շքախումբով չ'ուշացաւ դալու : Երբ իշխանուհին իր թագաւոր հօր ձեռքերը կը համբուրէր, սրտի յուզումէն կուլար ու կը դողդոջէր :

— «Հա՛յր, երախտապարտ եմ քեզի, որ դիս պատժեցիր : Կ'երդնում քեզի, ասկէ վերջը այլեւս մեծամիտ չըլլալ, մանաւանդ չը համարձակիլ որ և է մէկը ծաղրել» : —

Հայրը շատ գոհ մնալով, համբուրեց իր աղջկան ձակատը, և թագաւոր փեսային երջանիկ և անվիշտ օրեր ցանկացաւ :



## ԿԱՐՕՆ ՈՒ ՄԱՐՕՆ

Խոր ու մութ անտառի մը մէջտեղը շատ հին դըղեակ մը կար, որու մէջ կախարդ պառաւ մը կ'ապրէր, բոլորովին միս մինակը : Տորեկ ատեն բուրի մը կամ կատուի մը կերպարանքը կ'առնէր, բայց, երբ արեւը մայր կը մտնէր ու գիշերը կուգար, ան դարձեալ մարդկային կերպարանք կ'ստանար : Եթէ երիտասարդ մը դղեակին այնքան մօտենար, որ հարիւր քայլ միայն մնար, պառաւը կը կապէր անոր քայլերը, այնպէս որ ան այլեւս չէր կրնար քայլ մը անգամ առնել, և արձանի պէս կեցած տեղը կը մնար, մինչեւ որ պառաւը դարձեալ զայն արձակէր : Իսկ եթէ դղեակին մօտեցողը աղջիկ ըլլար, ան թուշուհի կը փոխէր, և պառաւը զայն բռնելով՝ վանդակի մը մէջ կը դնէր ու դղեակին մեծ սրահներէն մէկուն մէջէն կը կախէր : Այս միջոցով եօթը հարիւր աննման գեղեցիկ աղջիկներ թուշուհ դարձուցած՝ կախեր էր դղեակի մեծ սրահներէն մէկուն մէջէն :

Այս անտառէն քրջ մը հեռու, ծառոտ ու ջրոտ գիւղի մը մէջ կ'ապրէր Մարօ անունով աղջիկ մը, արեւին չափ գեղեցիկ ու լուանին չափ համեստ : Նոյն գիւղին մէջ կ'ապրէր նաև արծիւին պէս անվախ և աղաւնիին պէս միամիտ երիտասարդ մը՝ Կարօ անունով : Ասոնք զիրար չափազանց կը սիրէին, և երկուսի ալ ծնողները կը մտածէին իրարու հետ ամուսնացնել չուտով, նշանտուքը արգէն ըրած ըլլալով :

Օր մը երկու նշանածները անտառ գացին պտոյտի, և երբ անկէ ներս մտան, Կարօն ըսաւ — «Զգուշացիր, շատ չը մօտենաս դղեակին» : Հրաշալի իրիկուն մըն էր : Արեւին ճառագայթները, ոսկեգոյն փայլով մը, դեռ

կը ցոյցալին կանաչ սաղարթներուն մէջ, և տատրակները իրենց սրտառուչ երգերով՝ մեռնող արեւը կ'երգէին դարեւոր կաղամախներու ճիւղերուն վրայէն: Երկար բարակ թափառեցան անտառի զանազան կողմերը: Վերջապէս տեղ մը նստեցան, և երկուսով ալ յանկարծ խոր տխրեցան, առանց գիտնալու թէ ինչո՞ւ: Շուրջերնին նայեցան, և շարեցան թէ ո՞ր ճամբով տուն պիտի վերադառնային:

Արեւը կիսով չափ արդէն մայր էր մտեր: Կարօն ծառերուն մէջէն երբ այս այն կողմ կը նայէր, ճամբայ մը որոշելու նպատակով, յանկարծ ետ նայեցաւ և սարսափով նշմարեց ինչ գղեհակին պատերը, որոնց շատ մօտ կը գտնուէր: Այս բանէն սարսափելի վախցաւ. իսկ Մարօն կ'երգէր՝

— «Թիւեր եմ առեր, թռչուն եմ դարձեր,  
Քու սիրած Մարօղ, ալ չես տեսներ դու,  
Սեւեր եմ հագեր, կեանքէն որբացեր,  
Քու անբաղտ Մարօղ, ալ մի փնտրեր դու:  
Թիւհու, թիւհու, թիւհու, թիւհու...» —

Կարօն երգի ձայնն առնելով, այն կողմը նայեցաւ, և ո՞վ սեւ դժբաղտութիւն, Մարօն պղպուլ մըն էր դարձեր և — «Թիւհու, թիւհու» — ճուղելով իր տխուր երգը կ'աւարտէր, թառած վայրի վարդենիի մը ճիւղին: Ճիշդ միեւնոյն վայրկեանին մեծ բու մը, կրակէ աչքերով, թռաւ երեք անգամ վարդենիի վրայով, ամէն անգամին ալ — «Թիւ վի՛րւթ, թիւ վի՛րւթ, թիւ վի՛րւթ» — ճչալով:

Կարօն զգաց, որ Մարօին հետ ինքն ալ կախարդւած էր, որովհետեւ չէր կրնար քայլերը փոխել: Արձանի մը պէս կեցած էր եղած տեղը և չէր կրնար ոչ ոտքը և ոչ ալ ձեռքը շարժել, մինչեւ իսկ չէր կրնար գոնէ լալ:

Այս վայրկեանին արեւը բոլորովին մայր մտաւ, և անոր յաջորդեց սեւ ու մութ գիշերը: Բուն թռաւ ծառերուն մէջ և անյայտացաւ: Վայրկեան մը յետոյ պառաւ ու այնպէս կ'ին մը ծառերուն մէջէն առաջացաւ: Սոսկալի կերպարանք մը ունէր այս կինը. երեսը դեպի դեղին էր, աչքերը մեծ և երեսը կաս կարմիր, միտքը գրեթէ բոլորովին հալած և մանաւանդ հանկլի ու տափակ քիթ մը ունէր, որ մինչեւ կզակը կ'իջնէր:


Ասիկա շատ ցած ձայնով բաներ մը մոլտաց, բռնեց պղպուլը և աներևոյթ եղաւ: Կարօն շատ լաւ տեսաւ, թէ ինչպէս անյայտացաւ պղպուլը, սակայն ոչ կրնար տեղէն շարժիլ, ոչ ալ խօսք մը կամ ձայն մը կոկորդէն հանել: Զարնուրի կերպով, անձայն ու անշարժ, կը տառապէր միայն:

Շատ չանցած կոսխարդ պառաւը վերադարձաւ, և կոշտ ձայնով մը պոռաց.

— «Կը բարեւեմ քեզի, ծեր վնուկ, երբ լուսնի շողերը վանդակին մէջ կը փայլփլին, արձակէ այս կապեալը, ծեր վնուկ, կ'իմանա՞ս, յարմար ժամին» —:

Յանկարծ՝ Կարօն զգաց որ ազատւած էր: Իսկոյն ծունկի եկաւ կախարդ պառաւին առջեւ, և լալով ազաչեց, որ դարձեալ իրեն վերադարձնէ իր Մարօն: Բայց պառաւը կոշտութեամբ ետ մղեց զինքը, բսելով, թէ յաւիտեան այլեւս չպիտի տեսնէ Մարօն, և խաւարին մէջ հեռացաւ: Դեռ երկար, շատ երկար Կարօն ետեսէն լացաւ, աղաչեց, պաղատեց, բայց անօգուտ ետեսէն լացաւ, աղաչեց, պաղատեց, բայց անօգուտ ետեսէն լացաւ: Անտառի անաւոր լուսնի հետ սոսկալի խաւարը, թէեւ բնաւ չէին վախցներ անվախ Կարօն, սակայն սիրտն ու հոգին կը լեցնէին անհուն տրամութեամբ մը:

Այլեւս չուզեց անտառին մէջ մնալ, գլուխը կախ,



Աղաչեց իրեն վերադարձնել իր Մարօն

կէս մեռածի մը պէս քայլերը դէպի գիւղին ճամբան ուղղեց, հեկեկալով հետեւեալ խօսքերը. — «Ախ, ի՞նչ պիտի դառնայ իմ վիճակս» — : Սիրտ չունենալով այլեւս իրենց գիւղը մնալու, հեռացաւ անկէ, և ուրիշ, անծանօթ գիւղ մը գնաց, Հոս բաւական երկար ատեն ոչ խարնեցու հովիւ դարձաւ, և այսպէսով ապրեցաւ : Քանի՛, քանի՛ անգամներ անտառ գնաց և դղեակին բուրդաբեր հեռուէն թափառեցաւ : Խելքը միտքը հոն էր, հոն, ուր իր սիրտը վանդակի մէջ փակեր էր չար, անսիրտ պառաւ կախարդը : Ամէն անգամ, երբ ոչխարները կ'արածեցնէր, ինքն ալ զով աղբիւրի մը քով նստած՝ Մարօին հետ կը խօսէր ինքնիրեն, Երբեմն իրեն այնպէս կուգար, թէ աղբիւրի ձայնը ճիշտ Մարօին ձայնին կը նմանէր, Իսկ երբ կը պատահէր, որ պլպուլի մը ձայնը կ'առնէր, սաստիկ յուզւած կուլար, կարծելով, թէ Մարօն էր, որ եկեր էր ու կ'երգէր, վայրի վարդենիի մը մացառներուն մէջէն՝

— «Անրնկեր կարօս, սարերն է ընկեր,  
Սրտով սիրածի կսկիծէն գինով,  
Երկու ճրագ է մեր գիւղը մարեր,  
Աչխարն ծով է, ցաւերու խոր ծով,  
Թիւհո՛ւ, թիւհո՛ւ, թիւհո՛ւ, թիւհո՛ւ» — :

Այսպէս գիշեր ցորեկ շարունակ իր կորած Մարօին վրայ մտածելով, գիշեր մը երազ տեսաւ, իբր թէ ծիրանի գոյնով ծաղիկ մ'էր գտած, որու ծոցը մեծ և լուսաւոր մարգարիտ մը կար : Ասիկա փրցուցած՝ մտեր էր դղեակը, առանց կախարդելու : Եւ այս ծաղիկը ինչ բանի որ կը դայցնէր, նոյն վայրկեանին ան կ'աղաատէր կախարդական իր կապանքէն : Այս միջոցով ալ գտած էր Մարօն :

Երբ քունէն սրթնցաւ, նախ լացաւ որ տեսածը ե-

բազ էր միայն, բայց քիչ վերջը ուժերը հաւաքած՝ լիւս,  
ձոր, անդունդ ու ձերպ ոտքերուն տակն առած՝ հա-  
ւատքով սկսաւ երազին մէջ տեսած ծաղիկը վնտուել:  
Եւ իրաւ ալ իննորորդ օրը զայն գտաւ՝ անարկաւ ան-  
դունդի մը ծայրին միս մինակ բուսած: Ծիշտ ու ճիշտ  
երազին մէջ տեսած ծաղիկն էր, ծիրանի գոյնով, և մէջը  
խոշոր կաթիլ մը ցօղ, որ լուսաւոր մարգարիտի մը պէս  
կը շողար:

Առանց կենալու փրցուց զայն, և հալածւածի մը  
պէս ճամբայ ինչաւ դղեակը: Գիշեր ցորեկ անդադար  
քայլով, վերջապէս հասաւ դղեակը: Երբ անկէ հարիւր  
քայլով միայն հեռու էր, արդէն ծաղիկին զօրութիւնը  
տեսաւ, որովհետեւ անցած անգամւան պէս քայլերը չը  
կապուեցան մնացին:

Այս բանէն չափազանց ուրախացաւ, և սիրտ ա-  
ռաւ: Մօտեցաւ դղեակին գոց դռանը և ծաղիկով զար-  
կաւ. և անա, ո՛վ հրաշք, գոց դռուը բացեցաւ  
խակոյն: Պարտէզը մտնալով սանդուխներէն վեր բարձ-  
րացաւ, ու ներս մտնելով՝ հասաւ ընդունելութեան  
չքեղ ու ընդարձակ սրահը, ուրի՛ք, հարիւրաւոր թռ-  
չուններու երգի ձայները լսեց: Աւելի առաջանալով՝  
մտաւ վերջապէս այն մեծ սրահը, ուր պառաւ կախարդը  
իր եօթը հարիւր թռչունները իրենց վանդակներուն մէջ  
կերակրելու վրայ էր: Երբ պառաւը կարօն նշմարեց,  
դեւի մը նման կատղեցաւ, և սարսափելի ոռնալով,  
վրան յարձակեցաւ ու սկսաւ անոր երեսին թոյն ու մաղձ  
թփնել: Սակայն կարօն ծաղիկը դէմ բռնելով, ո՛չ պա-  
ռաւը կրցաւ մօտիկնալ, և ոչ ալ անոր թոյնն ու մաղձը  
իրեն երեսին հասնիլ: Այս դրութեան մէջ վայրկեան մը  
մնալէ յետոյ, պառաւի կաս կարմիր աչքերուն մէջ շեշ-  
տակի նայելով, ուսում մը բրաւ և ծաղիկով անոր


դպաւ: Դպչիլը գիտցաւ, և անա, կախարդ պառաւը  
ծուխի և բոցի վերածւած, չքացաւ սրահին մէջէն: Կա-  
րօն ազատ շունչ քաշեց: Բայց հիմա, ի՞նչպէս գտնել  
Մարօն: Հարիւրաւոր պլպուլներ կային, արդեօք ո՞րն  
էր Մարօն: Եւ որովհետեւ ամէնքն ալ ազատել մտա-  
դրած էր, ուստի սկսաւ բոլոր վանդակներուն կարգով  
դպցնել հրաշագործ ծաղիկը: Այս կերպով գտաւ իր  
Մարօն, որ եօթը հարիւրին մէջէն ամենէն գեղեցիկն էր:



# Ց Ա Ն Կ

	Երևա
1. Ոսկե մագերով Տիտանը . . . . .	3
2. Կօշկակարը եւ բզուկները . . . . .	20
3. Թռչունե մը գտնւած տղան . . . . .	25
4. Երախտագէտ Անասունները . . . . .	30
5. Մայր Հօլիեմ եւ ոսկի անձրեւը . . . . .	40
6. Ոսկե բռչունը . . . . .	49
7. Ծուռ կգակ բագաւորը . . . . .	69
8. Կարօն ու Մարօն . . . . .	79





154

0004172

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004172

